ԳԼՈԲՈՒՍ

Հրատարակվում է
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ աջակցությամբ

1 (70)

ԵՐԵՎԱՆ

2016

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 1 (70), 2016

«ԳԼՈԲՈՒՍ» ՏԵՂԵԿԱԳՐԻ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աշոտ Թավադյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Աշոտ Թևիկյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների և Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի կառավարման ամբիոնների դասախոս, տ.գ.թ.

Գագիկ Հարությունյան (համակարգող)
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Էդուարդ Լ.Դանիելյան
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հին դարերի պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ.

Կարեն Վ.Կարապետյան
Տնտեսագիտության դոկտոր

Մուշեղ Լալայան
ՀՀԿ փոխնախագահ

Սամվել Մանուկյան
IPSC Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի վերլուծաբան, ս.գ.թ.

Վահագն Ագլյան
«Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Աթոյան
«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, տ.գ.թ., դոցենտ

Վարդան Հարությունյան
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ վարչության նախագահ-գլխավոր տնօրեն, տ.գ.թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր
Գագիկ Հարությունյան

Գլխավոր խմբագրի տեղակալներ
Վահագն Ագլյան
Վարդան Աթոյան

Պատասխանատու խմբագիր
Խոնարհիկ Քարաուղլանյան

Պատասխանատու քարտուղար
Լուսինե Բաղրամյան

Խմբագիրներ
Աննա Ժամակոչյան
Արեստակես Սիմավորյան
Դիանա Գալստյան
Վահրամ Հովյան
Տիգրան Ղանալանյան

Էջադրող-ձևավորող
Տաթևիկ Քարաուղլանյան

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 1 (70), 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Հայկ Գաբրիելյան
ԻՊ-ին Թուրքիայի քողարկված աջակցության շուրջ 5

Գևորգ Պետրոսյան
Նոր անցակետ թուրք-վրացական սահմանին 15

Հայկ Գաբրիելյան
Թուրքիայի արտաքին քաղաքականությունը …..... 23

Ջոնի Մելիքյան
Վրաստանի արտաքին քաղաքականությունը …..... 33

Անուշավան Բարսեղյան
Ադրբեջանի արտաքին քաղաքականությունը …..... 41

Վալենտին Մեգուրու-Զայցև
Մոլդովան ճամփաբաժանին.
Ռուսաստանի, Ռումինիայի և Եվրամիության միջև 46

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Սամվել Մարտիրոսյան
Ինտերնետից միջին օգտվողի պատկերը Հայաստանում 54

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ

Կարեն Վերանյան
Մարդկային կապիտալի ինդեքսը 2015թ. …..... 59

Հուշագիր հեղինակին 63

Տարածաշրջան

ԻՊ-ԻՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔՈՂԱՐԿՎԱԾ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Հայկ Գաբրիելյան[*]

Հայտնի է, որ Թուրքիան տարբեր կապեր է հաստատել «Իսլամական պետության» (ԻՊ) հետ, նրան օգնում է բազում միջոցներով: Ընդ որում՝ ԻՊ-ին Թուրքիայի աջակցությունն իրականացվում է սահմանի երկու ուղղությամբ՝ Թուրքիայից Սիրիա և Սիրիայից Թուրքիա: ԻՊ-ին Թուրքիայի աջակցությունը պայմանականորեն բաժանել ենք երկու մասի՝ քողարկված և չքողարկված օգնություն: Այս հոդվածում կանդրադառնանք միայն Թուրքիայից Սիրիա ուղղությանն ու ԻՊ-ին Թուրքիայի քողարկված օգնությանը (բացառությամբ Սիրիայից Թուրքիա նավթի, բամբակի, անտիկ իրերի և այլնի մատակարարումների):

Զինյալների հոսք.- Թուրքիայից Սիրիա զինյալների հոսքի հարցում պետք է տարանջատել երկու հանգամանք. նախ ԻՊ-ին միանում են մեծ թվով Թուրքիայի քաղաքացիներ, և բացի այդ, Թուրքիան ծառայում է որպես տարանցիկ երկիր, որպեսզի համայն աշխարհից զինյալները մուտք գործեն Սիրիա:

ա) Թուրքական մամուլի հաղորդմամբ՝ երկրի քաղաքացիները ԻՊ-ին միանում են երկու հիմնական դրդապատճառով, որոնցից մեկը ջիհադ իրականացնելն է: ԻՊ-ը լայն քարոզչություն է իրականացնում Թուրքիայում, որտեղ ունի իր մասնաճյուղերը, հաջողությամբ հավաքագրում է երիտասարդներին, անչափահասներին ու տանում Սիրիա՝ ջիհադ իրականացնելու: Ընդհանուր առմամբ, ԻՊ թիրախում 18-35 տարեկաններն են, որոնց մեծ մասն ամուսնանում է «խալիֆայությունում»: Ընդդիմադիր Ժողովրդա-հանրապետական կուսակցության (ԺՀԿ) Քոնիայից ընտրված պատգամավոր Աթիլա Քարթի խոսքերով՝ ԻՊ-ը երիտասարդներին հավաքագրում է նաև գրախանութներում հանդիպելով նրանց ու բացատրելով ջիհադի իմաստն ու

[*] Թուրքագետ:

կարևորությունը: Բացի այդ, ԻՊ-ի համար աշխատող միությունները Ղուրանի և հադիսների կրթության պատրվակով մարդկանց հավաքում և մղում են ջիհադի՝ «աշխարհը զուլումից փրկելու» համար: Ուրբաթօրյա նամազը նույնպես լավ առիթ է ծառայում՝ նման հավաքների ու զրույցների համար:

ԻՊ-ին Թուրքիայի քաղաքացիների միանալու երկրորդ հիմնական պատճառը տնտեսական գործոնն է: ԻՊ թիրախում գտնվում են սոցիալապես անապահով ընտանիքների երիտասարդները: ԻՊ-ը փնտրում է պարտքեր ունեցող ընտանիքներ և դրամական խոշոր գումարներ է առաջարկում նրանց: Իր դերն ունի նաև երիտասարդների շրջանում գործազրկության հանգամանքը[1]: 2015թ. հուլիսին թուրք հոդվածագիր Աբդուլքադիր Սելվին գրեց, որ վերջին 3 տարում Թուրքիայից Սիրիա և Իրաք է մեկնել 10 հազ. մարդ, որոնցից 7 հազարը (70%) միացել է ԻՊ-ին: ԻՊ-ին Թուրքիայից ամենաշատը միացել են Ստամբուլ, Անկարա, Քոնիա, Ադանա, Դիարբեքիր, Գազիանթեփ նահանգներից[2]: Հուլիսին ԺՀԿ-ական պատգամավոր Մեհմեթ Շեքերը հայտարարել էր, որ Թուրքիայից ԻՊ-ին միացել է մոտ 10 հազ. երիտասարդ[3]:

2014թ. սեպտեմբերին ամերիկյան *The New York Times* թերթում հրապարակված «Թուրքիայից ԻՊ-ին զինյալներ են հոսում» խորագրով հոդվածում նշված էր, որ ՆԱՏՕ անդամ Թուրքիան ԻՊ-ի համար վերածվել է մարդկային ամենամեծ աղբյուրներից մեկի: Ընդգծվել էր, որ ԻՊ-ին միացած թուրք երիտասարդներից շատերը կախվածություն ունեն թմրանյութերից, սակայն նյութական պատճառներով նույնպես շատ են Թուրքիայից ԻՊ-ին միացողները. ԻՊ-ը մարտերին մասնակցելու օրերի համար վճարում է $150[4]:

բ) 2015թ. փետրվարին ԱՄՆ ազգային հետախուզության տնօրեն Ջեյմս Քլեպերը հայտարարել էր, որ ԻՊ-ին միացող օտարազգիների 60%-ը Սիրիա է անցնում Թուրքիայի սահմանը հատելով[5]: Ուշագրավ է, որ նույն փետրվարին ԱՄՆ ահաբեկչական պայքարի ազգային կենտրոնի նախագահ Նիք Ռասմուսենը հայտարարել էր, որ ԻՊ-ին ու ծայրահեղական մյուս խմբերին միանալու նպատակով Սիրիա և Իրաք մեկնած օտարազգի զինյալների թիվը գերազանցել է 20 հազարը, որից 3400-ն արևմտյան երկրների քաղաքացի է[6]:

[1] Arife Kabil, Bir Türk IŞİD'e neden katılır?, Zaman, 07.09.2014.
[2] Yeni Şafak temsilcisi: Türkiye'den son 3 yılda 7 bin kişi IŞİD'e katılmış!, T24, 22.07.2015.
[3] CHP'li Şeker: 'Türkiye'den 10 kişi IŞİD'e katıldı', Taraf, 09.07.2015.
[4] New York Times'tan çarpıcı iddia: Türkiye'den IŞİD'e militan akıyor, Zaman, 16.09.2014.
[5] 'IŞİD'e katılanların çoğu Türkiye'den geçti', Radikal, 27.02.2015.
[6] IŞİD'e Katılan Yabancı Militan Sayısı 20 Bini Aştı !, Haber5, 11.02.2015.

Թուրքիայի տարածքով ԻՊ-ին միանալ ցանկացող օտարազգիները Սիրիայի սահմանը հատելու համար գումար են վճարում մաքսանենգներին (միջնորդներ), և այդ գումարի կեսը բաժին է ընկնում տեղի թուրք պաշտոնյաներին: Դրա մասին նախորդ տարվա ամռանը *The Christian Science Monitor*-ի թղթակցին հայտնել է ջիհադականներին թուրք-սիրիական սահմանով անցկացնող սիրիացի Աբու Վելիդը: Նա ընդգծել է, որ սահմանը հատել ցանկացող օտարազգիները եկամտի լուրջ աղբյուր են, և նրանցից ստացված գումարի 50%-ը բաժին է ընկնում սահմանի թուրք պաշտոնյաներին. «Ամենալավ փողը վճարում են Սաուդյան Արաբիայից և Քուվեյթից ժամանածները՝ առնվազն $1000: Վերջին երկու տարում բազում երկրներից Սիրիա եկած օտարազգի զինյալների շրջանում ամենամեծ թիվը կազմել են Թուրքիայի քաղաքացիները»[7]:

2015թ. գարնանը հաղորդվել էր, որ Ստամբուլում գործել է ԻՊ զինյալների համար թուրքական կեղծ անձնագրեր թողարկող կենտրոն, որում թողարկվել է 100 հազար թուրքական կեղծ անձնագիր (վաճառվել են 200-ական դոլարով): Այդ անձնագրերի առնվազն կեսն ուղարկվել է Չինաստանի Սինձյան-Ույղուրական ինքնավար շրջան (որտեղ Թուրքիան տարիներ շարունակ ծավալել է լայն գործունեություն): Այստեղից մուսուլման ույղուրները զարտուղի ճանապարհներով հասել են Թաիլանդ (կամ Կամբոջա), այնտեղից էլ՝ Թուրքիայի հետ վիզային ռեժիմ չունեցող Մալայզիա, ապա ինքնաթիռով ժամանել են Ստամբուլ: Այստեղ նրանք մնացել են մեկ գիշեր, հրահանգավորվել են, ապա մեկնել Սիրիա և Իրաք: Այդպիսով, ույղուր զինյալն ԻՊ-ին միանալու համար անցել է Չինաստան-Թաիլանդ-Մալայզիա-Թուրքիա-Սիրիա երթուղով[8]:

Դրանից առաջ՝ 2014թ. ամռանը, գերմանական *ARD* հեռուստաընկերությունը, վկայակոչելով եվրոպական հետախուզական կառույցները, հայտնել էր, որ ԻՊ-ը պաշտոնական գաղտնի բյուրո է ստեղծել Ստամբուլի Ֆաթիհ թաղամասում: Բյուրոյում ԻՊ-ին միանալու նպատակով Ստամբուլ ժամանածները ստանում են «ապրելու փող»՝ $400, ապա բյուրոն կազմակերպել է նրանց անցումը Սիրիա[9]:

[7] IŞİD'e katılmak isteyenler Türkiye sınırını kullanıyor, ödenen paranın yarısı Türk yetkililere gidiyor, T24, 24.06.2015.

[8] IŞİD'e Türk pasaportu, Meydan, 09.04.2015.

[9] 'IŞİD'in Fatih'te bürosu var', Milliyet, 28.08.2014, Տե՛ս նաև *Վարուժան Գեղամյան,* Թուրքիայի դերը «Իսլամական պետություն» կազմակերպության կայացման գործում, Վերլուծական տեղեկագիր, Հ. 7, ԵՊՀ, Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն, Երևան, 2015:

Ի դեպ, Թուրքիան աչքի է ընկել նաև ԻՊ զինյալներին իր տարածքով Սիրիայի մի հատվածից մյուսը տեղափոխելով: Փորձելով ամեն կերպ խոչընդոտել Սիրիայի քրդերի կողմից Թել Աբյադի գրավմանը և դրանով իսկ Սիրիայի հյուսիսում քրդական ինքնավար շրջանների (Քոբանի և Ջիզրե) միավորմանը՝ Թուրքիայի Ազգային հետախուզական կազմակերպությունը (*MIT*) ԻՊ վերահսկողության տակ գտնված Աթմեից նրա զինյալներին ավտոբուսներով իր տարածքով հասցրել է Աքչաքալեի սահմանային անցակետ, իսկ այնտեղից էլ՝ Թել Աբյադ (ԻՊ զինյալները նման զորաշարժ չէին կարող կատարել Սիրիայի տարածքում, քանի որ Քոբանիի շրջանը գտնվում էր Սիրիայի քրդերի վերահսկողության տակ): *MIT* վարձած ավտոբուսների վարորդներն ավելի ուշ հայտարարել են, որ իրենք մեղք չունեն, և որ կատարել են պետական աշխատանք[10]:

Զենք-զինամթերքի հոսք.- Հայտնի է, որ ԻՊ-ն իր տրամադրության տակ ունի տարբեր զինատեսակներ՝ սկսած տանկերից ու հրանոթներից, վերջացրած հրաձգային զենքից, բացի այդ, մեծ քանակությամբ զինամթերք է ծախսում ռազմաճակատներում: Մասնավորապես 2014թ. Դեյր էզ Զորի համար մարտերում ԻՊ-ը միայն տվյալ ռազմաճակատում ծախսել է ամսական $1 մլն-ի զինամթերք: 2015թ. վերջին *Financial Times* թերթը, վկայակոչելով ԻՊ-ի համար զենքի առևտրով զբաղվողներից Էբու Օմերին, գրել էր, որ զինամթերքի հարցում ԻՊ կարիքները բավարարելու և դրանք արագ ռազմաճակատ հասցնելու համար ստեղծվել են շրջիկ խմբեր, որոնք բանակցում են տարածաշրջանի զինապահեստների ու ռազմաճակատների հրամանատարների հետ, հստակեցնում են զենք-զինամթերքի գները և հայտնում ԻՊ ղեկավարությանը: Զենքի առևտրի հարցում այդ միջնորդները ստանում են գործարքի 10-20%-ը: Նրանց ծառայություններն ավելի պահանջված են դառնում թեժ մարտերի ժամանակ, ինչպես որ ԻՊ ու Հյուսիսային Իրաքի քրդերի ուժերի՝ Փեշմերգայի միջև բախումների ժամանակ անհրաժեշտ է եղել զինամթերքի մատակարարում կազմակերպել շուրջօրյա ռեժիմով: Էբու Օմերն ընդգծել է, որ Թուրքիայի սահմանից զինամթերքի մատակարարումը բարդացել է կոալիցիոն ուժերի ավիահարվածներից հետո, և այդ պատճառով աճել են զինամթերքի գները[11]:

2015թ. նոյեմբերին թուրքական մամուլը գրեց, որ Սիրիայում հայտնաբերվել են ԻՊ-ին և ջիհադական այլ խմբերին Թուրքիայից ուղարկված զինա-

[10] IŞİD militanı taşıyan otobüs şoförleri: Suçumuz yok, devlet işi yapıyorduk, Zaman, 12.06.2015.
[11] IŞİD cephanesini nereden ve nasıl alıyor?, Hürriyet, 01.12.2015.

մթերքով արկղեր, որոնք կրել են Թուրքիայում զենք-զինամթերքի խոշորագույն արտադրող ընկերություն-գործարան *MKE*-ի լոգոն, և որ դա վկայում է Թուրքիայի կառավարության և ԻՊ-ի ու նրա հետ կապված խմբերի կեղտոտ համագործակցության մասին[12]:

Թուրքիայի տարածքից Սիրիա զենք-զինամթերքի մատակարարումներ են իրականացվել նաև ԻՊ հաղթարշավից առաջ: Մասնավորապես, 2014թ. հունվարի 10-ին Ադանայի ոստիկանությունը կանգնեցրել էր երկու ավտոբուս, որոնցում հայտնաբերվել էր գնդացիրների համար նախատեսված 40 արկղ փամփուշտ: Ավտոբուսների վարորդները պատմել էին, որ մեքենաները վարձակալվել են *MIT*-ի կողմից, և որ բեռը նախատեսված է եղել Սիրիայի ջիհադականների համար: Դրանից 9 օր անց նույն Ադանայում ժանդարմերիայի աշխատակիցները կանգնեցրել էին *MIT*-ին պատկանող բեռնատարները, որոնցում հայտնաբերվել էր մեծ քանակությամբ զենք-զինամթերք: Դատախազ Ազիզ Թաքչը հայտարարել էր, որ Ադանայի նահանգապետ Հուսեին Ավնի Ջոշն իրեն պատմել է, որ այդ բեռնատարները և դրանց բեռները պատկանել են *MIT*-ին, և որ այդ ամենի մասին տեղյակ են ներքին գործերի նախարարն ու վարչապետը (Էրդողան): Սակայն *MIT*-ի կողմից Սիրիա զենքի գաղտնի մատակարարումների գործով հետաքննությունը կասեցվեց, իսկ *MIT* բեռնատարների կանգնեցման ու դրանց խուզարկման գործընթացին մասնակից ժանդարմներն ու դատախազները «հեղաշրջման փորձի» ու «լրտեսության» մեղադրանքներով կալանավորվեցին: 2015թ. մայիսին *MIT* բեռնատարներով Սիրիա գաղտնի զենք տեղափոխելու մանրամասների մասին հոդվածի հրապարակումից հետո կալանավորվեցին «Ջումհուրիյեթ» թերթի գլխավոր խմբագիր Ջան Դյունդարն ու Անկարայում թերթի բյուրոյի ղեկավար Էրդեմ Գյուլը, որոնք մեղադրվում են «պետության դեմ լրտեսություն կատարելու» և «ահաբեկչական զինված խմբերին աջակցելու» համար: Նրանց սպառնում է ցմահ ազատազրկում[13]:

2014թ. մարտի 30-ին Թուրքիայում անցկացված ՏԻՄ ընտրություններից առաջ *YouTube*-ում հայտնվեց մի ձայնագրություն, որում Թուրքիայի անվտանգության խորհրդի մասնակիցները քննարկել են Սիրիայի հարցը: Ձայնագրությունում լսվում է *MIT* ղեկավար Հաքան Ֆիդանի ձայնը, որը հայտա-

[12] AKP'nin suçüstü görüntüleri! IŞİD'in MKE logolu cephanesi, ABC, 30.11.2015.
[13] Can Dündar ve Erdem Gül için çifte müebbet talebi!, Vatan, 28.01.2016.

բարում է, որ ցայժմ 2000 բեռնատար են ուղարկել Սիրիա, և եթե անհրաժեշտ լինի, ապա Սիրիա կուղարկեն 4 մարդ, որոնք Թուրքիայի ուղղությամբ 8 հրթիռ կարձակեն, կհարձակվեն Շահ Սուլեյմանի դամբարանի վրա[14]: Թուրքիան այդպիսով ցանկանում էր հարմար առիթ ստեղծել Սիրիայի հյուսիսում բուֆերային գոտի ձևավորելու համար:

Թուրքական մամուլի համաձայն՝ ԻՊ-ին զինամթերք մատակարարելու գործին լծվել է անգամ «Թուրքիայի Հանրապետության պետական երկաթուղիներ» (*TCDD*) ընկերությունը, որի գնացքը 2014թ. սեպտեմբերի կեսին Գազիանթեփ-Նուսայբին երթուղով անցնելիս կանգ է առել Թել Աբյադի հակառակ կողմում՝ կայարան չունեցող Սիլիբ Քերան գյուղում, և բեռնաթափել է ԻՊ-ի համար նախատեսված զինամթերքը: Ավելի ուշ հաղորդվեց, որ ԻՊ զինյալների մոտ հայտնվել է *MKE* լոգոյով զինամթերք[15]: Ուշագրավ է, որ դա տեղի է ունեցել ԻՊ-ի կողմից Քոբանիի պաշարման ժամանակ: Քրդամետ Ժողովուրդների դեմոկրատական կուսակցության (ԺԴԿ) պատգամավոր Այլա Աքաթ Աթան *TCDD*-ին պատկանող գնացքներով ԻՊ-ին զինամթերք մատակարարելու հարցով դիմել է երկրի վարչապետ Ահմեթ Դավութօղլուին: Նա ընդգծել է, որ թեպետ *TCDD* կայքը հայտնել է, թե չեղյալ են հայտարարվել Գազիանթեփ-Նուսայբին ուղղությամբ գնացքների չվերթները, սակայն ականատեսների վկայությամբ՝ *TCDD* գնացքը կանգ է առել Սիլիբ Քերան գյուղում և բեռնաթափվել: Աթան բարձրացրել է նաև ԻՊ-ին բեռնատարներով զինամթերք մատակարարելու մասին նախկինում մամուլի հրապարակումների կապակցությամբ հետաքննություն սկսելու հարցը[16]:

Ուշագրավ է նաև, որ Մոսուլում ԻՊ-ի կողմից պատանդ վերցված Թուրքիայի 49 քաղաքացիները, այդ թվում նաև հյուպատոսը, 101 օր գերության մեջ մնալուց հետո ազատ են արձակվել հենց *TCDD*-ի շուրջ ծագած սկանդալի ժամանակ: Թուրքական մի շարք լրատվամիջոցներ գրեցին, որ Թուրքիան իր 49 քաղաքացիների համար ԻՊ-ին հատկացրել է 49 տանկ և ռազմամթերք, որոնք էլ ԻՊ-ին հասցվել են *TCDD* գնացքներով[17]:

2015թ. դեկտեմբերին ԺՀԿ-ական պատգամավոր Էրեն Էրդեմը հայտարարեց, որ ԻՊ-ը 2013թ. Թուրքիայից ստացել է զարին թունավոր գազի պատրաստման քիմիկատներ, որը կարող է կիրառված լինել Դամասկոսի մոտ քի-

[14] MİT araçları IŞİD'e silah cephane ve cihatçı taşıyordu, Ortak Haber, 16.10.2015.
[15] TCDD treniyle IŞİD'e cephane mi taşınıyor?, İnsan Haber, 17.09.2014.
[16] Ayla Akat Ata: TCDD, IŞİD'e cephane taşıdı mı?, soL Haber Portalı, 20.09.2014.
[17] 49 rehineye karşılık IŞİD'e 49 tank mı verildi, Odatv, 21.09.2014.

միական հարձակման ժամանակ, ինչում մեղադրվել էր Ասադի բանակը: Նա վստահեցրել է, որ Թուրքիայի իշխանությունները տեղյակ են եղել այդ մասին, և որ կան համապատասխան ապացույցներ[18]: Էրդեմը դրանից օրեր առաջ այդ հարցը բերել էր Թուրքիայի խորհրդարանի օրակարգ՝ հիշեցնելով, որ Ադանայի դատախազությունն այն ժամանակ գործ էր հարուցել, կալանել էր 10 մարդու, սակայն հետո նրանք ազատ էին արձակվել՝ չնայած համապատասխան ապացույցների առկայությանը:

Հիշեցնենք, որ 2014թ. ապրիլին ամերիկացի լրագրող Սեյմուր Հերշը գրել էր, որ Դամասկոսի մոտ կատարված քիմիական հարձակման հետևում կարող է կանգնած լինել (վարչապետ) Էրդողանի կառավարությունը[19]: Պետք է հիշել, որ երբ ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման Սիրիայի նախագահ Բաշար Ասադի համար «կարմիր գիծ» սահմանեց սեփական ժողովրդի հանդեպ քիմիական զենքի կիրառումը, բնական է, որ Ասադի հակառակորդները պետք է շահագրգռված լինեին քիմիական զենքի կիրառմամբ, որպեսզի դրան հաջորդեր Սիրիայում ամերիկյան ռազմական միջամտությունն ու Ասադի վարչակարգի տապալումը: Դա հատկապես վերաբերում է ՆԱՏՕ անդամ Թուրքիային, որը սիրիական հակամարտության ընթացքում գնացել է սահմանային մի շարք սադրանքների (Սիրիայից իր տարածքի գնդակոծություններ, հրետակոծություններ, ինքնաթիռների և ուղղաթիռների կործանումներ)՝ ՆԱՏՕ-ին դրանում ներքաշելու համար, շեշտը դնելով հավաքական պաշտպանության մասին ՆԱՏՕ կանոնադրության 5-րդ հոդվածի վրա:

Դեղորայքի հոսք և վիրավորների բուժում.– Թուրքիան ԻՊ-ին օգնում է նաև դեղորայքով և նրա վիրավոր զինյալներին իր տարածքում բուժելով, նրանց նորից Սիրիա ուղարկելով: Սիրիայի քրդերի կողմից Թել Աբյադի գրավումից հետո հայտնաբերվեցին ԻՊ պահեստները, որոնցում գտնված դեղորայքի մեծ մասը եղել է թուրքական արտադրության: Դեղորայքի տուփերի գրությունները (*Gaziantep Havalimanı NASCO-Özel Antrepo İşletmeciliği, Selçuk Ecza Deposu, Hatay Ovalı Eczanesi*) վկայել են, որ դրանք բերվել են Թուրքիայի Գազիանթեփ և Հաթայ նահանգներից[20]: 2015թ. վերջին՝ Սիրիայում ԻՊ-ից Տիշրին գյուղաքաղաքի ազատագրման ժամանակ հայտնաբերվել էր Ստամբուլում արտադրված դեղորայք[21]:

[18] CHP'li Erdem'den Rus TV'sinde şok sözler!, Internet Haber, 14.12.2015.
[19] Pulitzer ödüllü gazeteci 'kimyasal saldırıda Türkiye parmağı' haberinin arkasında, T24, 08.04.2015.
[20] IŞİD'e ilaç da Türkiye'den!, Evrensel.net, 22.06.2015.
[21] Teşrin'de Türkiye'den IŞİD'e gönderilen serumların bulunduğu iddiası, BirGun.net, 29.12.2015.

Թուրքական մամուլում մի շարք հրապարակումներ են եղել Թուրքիայում ԻՊ վիրավոր զինյալների բուժվելու մասին, որոնց մի մասը դրանից հետո վերադարձել է Սիրիա: Աթիլա Քարթի խոսքերով՝ 2014թ. սեպտեմբերին Գազիանթեփ, Քիլիս և Շանլըուրֆա նահանգների հիվանդանոցներում բուժում էր ստանում ԻՊ մոտ 600 զինյալ: 2014թ. հունիսին թուրքական «Այդընլըք» թերթի հետ զրույցում Անկարայում բուժում ստացող ԻՊ զինյալներից մեկը հայտարարել էր, որ Թուրքիայի կառավարությունը սիրիական ճգնաժամի սկսվելուց հետո օգնել է իրենց, որ ԻՊ բազում անդամներ բուժում են ստանում այդ երկրում, որ աշխարհի ավելի քան երկու տասնյակ երկրներից զինյալներն իրենց մոտ գալիս են Թուրքիայով, և եթե չլիներ այդ օգնությունը, ապա ԻՊ-ը չէր հասնի նման հաջողության[22]:

2014թ. հունիսին Մարդինի քաղաքապետ Ահմեթ Թուրքը հայտարարել էր, որ Թուրքիայի կառավարությունը չի ցանկանում Սիրիայի քրդերի ուժեղացում, ինչի համար էլ ԻՊ զինյալները հանգիստ հատում են երկրի սահմանը, բուժում են ստանում Թուրքիայում, մինչդեռ երկրի իշխանությունները չեն թույլատրում տարեց և վիրավոր Սիրիայի քրդերի մուտքը երկիր[23]: Ահմեթ Թուրքն այժմ մեղադրվում է «ահաբեկչական կազմակերպության անդամ հանդիսանալու», «ահաբեկչական կազմակերպության օգտին քարոզչություն կատարելու» համար: Նրան սպառնում է 7.5-18 տարվա ազատազրկում[24]:

ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը նույնպես հայտարարել է, որ ԻՊ զինյալները բուժում են ստանում Թուրքիայում և կազդուրվելուց հետո վերադառնում են պատերազմելու: Լավրովի խոսքերով՝ ԻՊ զինյալները Թուրքիան օգտագործում են նաև իրենց առևտրային գործարքների և զինամթերքի մատակարարումների համար[25]: Սիրիայում ռուսական ռազմական կամպանիայի մեկնարկից մեկ ամիս անց՝ 2015թ. հոկտեմբերի վերջին, թուրքական մամուլը հայտնեց, որ Հաթայի հիվանդանոցներ է բերվել 34 մարդ՝ դա ներկայացնելով հետևյալ կերպ. «Ռուսաստանը հարվածում է, իսկ Թուրքիան՝ բուժում»[26]:

2014թ. սեպտեմբերին Թուրքիայի առողջապահության նախարար Մեհմեթ Մուեզզինօղլուն, մեկնաբանելով շրջանառվող այն լուրերը, թե ԻՊ զին-

[22] Tedavi için Ankara'ya gelen IŞİD militanı Aydınlık'a konuştu, Aydınlık, 26.06.2014.
[23] Ahmet Türk: Türkiye IŞİD'e yardım etti, soL Haber Portalı, 13.06.2014.
[24] Ahmet Türk hakkında 18 yıla kadar hapis istemi, Sabah, 28.01.2016.
[25] Lavrov: IŞİD militanları Türkiye'de tedavi olduktan sonra savaşa geri dönüyor, Ileri Haber, 09.12.2015.
[26] Rusya vuruyor, Türkiye tedavi ediyor, Dünya Bülteni, 31.10.2015.

յալները բուժում են ստանում Թուրքիայում, չհերքեց դա. «Երբ մեզ մոտ բերում են լեռներում գործող *PKK* վիրավոր ահաբեկչի, որը մեկ ժամ առաջ կրակել է մեր զինվորի վրա, մենք բուժօգնություն ենք ցուցաբերում նրան, հետո նոր հանձնում ենք ոստիկանությանն ու արդարադատությանը: Մենք չունենք դատական գործառույթներ: Մեր գործառույթը հիվանդին բուժելն է՝ անկախ նրա քայլերից, ինքնությունից, կրոնական, ռասայական, դավանաբանական պատկանելությունից»[27]:

Այստեղ պետք է հիշատակել 2014թ. փետրվարին ԺՀԿ-ական պատգամավոր Մեհմեթ Ալի Էդիբօղլուի կողմից լիբանանյան *El-Safir* և *Al-Diyar* թերթերի սկանդալային հրապարակումների թեման Թուրքիայի խորհրդարանի օրակարգ բերելն ու Մեհմեթ Մուեզզինօղլուից պարզաբանում պահանջելը: Դրանց համաձայն՝ Թուրքիայի Անթաքիա և Իսքենդերուն քաղաքների հիվանդանոցներ բերված սիրիացի վիրավորներին ներարկում են քնաբեր, սպանում են, հանում առողջ օրգանները և դրանք վաճառում «սև շուկայում»: Ամենամեծ պահանջարկը վայելել են երիկամները: Թերթերի տվյալներով՝ նման ճակատագրի է արժանացել վիրավոր վիճակում Թուրքիա բերված 62 հազ. սիրիացիներից 15 հազ. 622-ը: Դրանից հետո սիրիացիներին հուղարկավորում են Թուրքիայում, իսկ նրանց հարազատներին հայտնում են, թե նրանք մահացել են և անհնար է նրանց դիակները Սիրիա ուղարկելը, կամ էլ դիակների մի մասը Սիրիա է ուղարկվում փակ դագաղներով, որպեսզի դրանք չբացեն զոհվածների հարազատները: Սակայն նրանց մի մասը պնդել է բացել դագաղները, ինչից հետո նրանք հայտնաբերել են, որ իրենց հարազատները մի շարք օրգաններ չեն ունեցել[28]:

Այսպիսով, Թուրքիան քողարկված մեծ օգնություն է ցուցաբերում ԻՊ-ին, որը շատ ավելի բազմակողմ է, քան վերոբերյալը: Մասնավորապես, ԶԼՄ հրապարակումների համաձայն՝ Թուրքիան նաև ռազմական ուսուցում է տվել ԻՊ զինյալներին, նրանց օգնել է հետախուզական առումով՝ տրամադրելով արբանյակային լուսանկարներ: Թուրքիան անգամ ԻՊ հաղթարշավին է ծառայեցրել Եփրատ գետը՝ ժամանակավորապես գրեթե կտրելով նրա գետահոսքը, որպեսզի ԻՊ զինյալներն անարգել շարժվեն Քոբանիի վրա, ինչի մասին նշել ենք մեր հոդվածներից մեկում: Չի բացառվում, որ կան այլ ոլորտներ

[27] Müezzinoğlu: IŞİD yaralısı da olsa tedavi ederiz, Hürriyet, 24.09.2014.
[28] 'Suriyeli mültecilerin organları çalınıyor mu?', T24, 10.02.2014.

ևս, որտեղ Թուրքիան աջակցել և աջակցում է ԻՊ-ին, որոնց մասին, սակայն, դեռ չի բարձրաձայնվել: Թուրքիան այդպիսով «հիբրիդային պատերազմ» է վարում հարևան Սիրիայում՝ իր նպատակներին հասնելու համար: ԻՊ-ին Թուրքիայի աջակցության հիմնական դրդապատճառներն են.

ա) Բաշար Ասադի վարչակարգի տապալումը՝ հետասադյան շրջանում Սիրիայում բարյացակամ վարչակարգ տեսնելու, գերակա դիրքեր ունենալու համար, բ) Սիրիայի քրդերի թուլացումը, նրանց կողմից ինքնավարության (ավելի լայն՝ քրդական միասնական պետության) ստեղծման կանխումը, գ) Սիրիայում ահաբեկչության (ԻՊ) դեմ պայքարի պատրվակով հարմար առիթի դեպքում բուֆերային գոտու ձևավորման (ռազմական ներխուժում ձեռնարկելու) համար հիմքի ստեղծումը՝ տարածքային նվաճումներ ունենալու ակնկալիքով (թուրքական կողմը հայտարարում է իր համար Հալեպի (նաև Մոսուլի) հատուկ կարևորության մասին, այն ներկայացվում է որպես «Թուրքիայի 82-րդ նահանգ»), դ) Ասադի վարչակարգի տապալմամբ տարածաշրջանում Իրանի ազդեցության նվազեցումը, Իրան-Իրաք-Սիրիա-Լիբանան («Հզբոլլահ») շիական առանցքում սեպ խրելը (Թուրքիան ներկայումս պարտվում է Իրանի հետ տարածաշրջային մրցակցությունում), ե) Ասադի վարչակարգի տապալմամբ Սիրիայում Ռուսաստանի դիրքերի թուլացումը կամ վերացումը (3 կողմից ծովերով շրջապատված Թուրքիային մտահոգում է, որ Սև և Միջերկրական ծովերում հետզհետե (Աբխազիայի, Ղրիմի, Սիրիայի դեպքեր) ավելի շատ է շրջապատվում ռուսական նավատորմով), զ) միջազգային հանրության կողմից իր պահանջարկի մեծացումը (ԻՊ-ի հետ բաց սահման ունեցող Թուրքիան դիտարկվում է առանցքային (բանալի) երկիր՝ ԻՊ (ինչպես նաև Եվրոպա փախստականների հոսքի զսպման) խնդրի լուծման համար), է) տնտեսական խոշոր շահույթներ ստանալը՝ նաև պաշտոնյաների մակարդակով:

ՆՈՐ ԱՆՑԱԿԵՏ
ԹՈՒՐՔ-ՎՐԱՑԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ

Գևորգ Պետրոսյան*

2015թ. հոկտեմբերի 18-ին Թուրքիան և Վրաստանը բացեցին սահմանային նոր անցակետ, որը թուրքական կողմում կրում է Չըլդըր-Աքթաշ, իսկ վրացական կողմում՝ Կարծախ անվանումը:

Աքթաշ/Կարծախ անցակետը երրորդն է շուրջ 270 կմ երկարությամբ ձգվող Թուրքիայի և Վրաստանի միջպետական սահմանին: Աքթաշի սահմանային անցակետը ներկայիս Թուրքիայի Արդահանի նահանգի Չըլդըր շրջանում է, իսկ Կարծախի սահմանային անցակետը՝ Վրաստանի Սամցխվե-Ջավախքի Ախալքալաք շրջանում:

Թուրքիայի և Վրաստանի միջև մյուս երկու սահմանային անցակետերից մեկը՝ Սարփի անցակետը, Սև ծովի ափով կապում է Բաթումն ու Արդվինը, մյուսը՝ Թյուրքգյոզու/Վալե անցակետը, Ախալցխան և Արդահանը, ինչպես և նոր սահմանային անցակետը: Վերոնշյալ անցակետերից առավել ծանրաբեռնվածը սևծովյան Սարփի անցակետն է: Աքթաշ/Կարծախ անցակետը վրաց-թուրքական սահմանի ծայր հարավային հատվածում է՝ Վրաստանի հայաբնակ Ախալքալաք քաղաքից շուրջ 35 կմ հարավ-արևմուտք, իսկ ներկայիս Թուրքիայում գտնվող Արդահան քաղաքից 62 կմ հյուսիս-արևելք: Վրաստանի տարածքում անցակետի ամենամոտ բնակավայրը Կարծախ (Կարզախ) գյուղն է[1], որը բնակեցված է հայերով: Թուրքական կողմում անցակետին ամենամոտ բնակավայրը Քենարբել (Քանարբել) գյուղն է, որը նախկինում հայաբնակ է եղել[2]: Անցակետի անմիջական հարևանությամբ է Ջավախքի ազգային պարկի մաս կազմող Խոզափին լիճը, իսկ անցակետից Արդահան տանող ճանապարհն անցնում է ավելի խոշոր Ծովակն լճի մոտակայքով[3]:

---

* Թուրքագետ, *ԵՓՐԱՏ ուսումնասիրությունների կենտրոնի նախագահ:*

[1] Կարզախ գյուղում գործում է Սուրբ Կարապետ հայկական եկեղեցին, իսկ բնակավայրը հայտնի է նրանով, որ այստեղ ծնվել է աշուղ Ջիվանին:

[2] *Աշոտ Մելքոնյան,* «Ախալցխայի նահանգի վարչաժողովրդագրական պատկերը՝ ըստ թուրքական հարկացուցակների (16-րդ դ. վերջ - 18-րդ դ. սկիզբ)», Հայոց պատմության հարցեր. Գիտական հոդվածների ժողովածու-2, Երևան, 2011, էջ 32:

[3] Ծովակն լիճը Թուրքիայում անվանում են Չըլդըր: Այս անունով կոչվում է նաև լիճն ընդգրկող շրջանը:

Թեև այս հատվածում սահմանային անցակետ կառուցելու և այն վերագործարկելու խոսակցությունները վերջին տասնամյակներին մշտապես օրակարգում էին, սակայն թուրք-վրացական անցակետի հիմնարկեքի արարողությունը կայացավ միայն 2013թ., ինչից հետո էլ սկսվեց լայնածավալ շինարարությունը:

Մինչև Երկրորդ աշխարհամարտի տարիները, այստեղ ևս գործել է սահմանային անցակետ Թուրքիայի Հանրապետության և ԽՍՀՄ-ի միջև, սակայն պատերազմի տարիներին որոշում է կայացվել փակել այն[4], ինչից հետո ընդհուպ մինչև 2015թ. այն չի գործել: Թուրքական կողմը նոր անցակետի շինարարության համար ծախսել է շուրջ 60 մլն թուրքական լիրա (շուրջ $25 մլն): Անցակետին կից կառուցվել են նաև մաքսային նշանակության շինություններ: Շինության ընդհանուր տարածքը կազմում է շուրջ 76 հազ. մ^2, որից 20 հազ. մ^2 հատվածը փակ տարածքներն են: Անցակետն ունի երեք մուտքի և երեք ելքի ուղիներ[5]: Այսպիսով, իր չափերով այն դառնում է Թուրքիայի երրորդ ամենախոշոր սահմանային անցակետը[6]:

Հնարավորություն ունենալով անձամբ անցնել Թուրքիայի և Վրաստանի միջև երեք սահմանային անցակետերով էլ՝ ակնհայտ է, որ նոր անցակետը և՛ ավելի հարմար է, և՛ ավելի խոշոր ու ժամանակակից՝ մյուս երկուսի համեմատ: Միևնույն ժամանակ, անձնական փորձից ելնելով՝ հնարավոր է պնդել, որ անցակետի հանդիսավոր բացմանը հաջորդած օրերին Աքթաշ/Կարծախում առկա էին որոշ տեխնիկական խնդիրներ, և ակնհայտ էր աշխատակազմի անփորձությունը:

Հոկտեմբերի 18-ին թուրք-վրացական սահմանային նոր անցակետի հանդիսավոր բացմանը ներկա էին բարձրաստիճան պաշտոնյաներ երկու պետություններից, ինչն ընդգծում էր դրա կարևորությունն ու նշանակությունը: Բացման հանդիսավոր արարողությանը ներկա էին Թուրքիայի մաքսային ծառայության և առևտրի նախարար Ջենափ Աշչըն, մշակույթի և զբոսաշրջության նախարար Յալչըն Թոփչուն, Արդահանի նահանգապետ Ահմեթ Դենիզը, իսկ վրաստանյան կողմը ներկայացնում էին Վրաստանի ֆինանսների

[4] Karatay Medya, “Kars Ve Ardahan’ı Kafkaslara Bağlamak”, http://karataymedya.com/2015/11/18/kars-ve-ardahani-kafkaslara-baglamak/.
[5] Gümrük ve Turizm İşletmeleri Ticaret A.Ş (GTİ), “Çıldır-Aktaş Sınır Kapısı”, http://www.gtias.com.tr/modul/index/menu/Arama_Sonuclari/101.
[6] Çıldır Manşet, “50 yılın hayali gerçek oluyor”, http://www.cildirmanset.com/haber/50-yilin-hayali-gercek-oluyor-2833.html.

նախարար Նոդար Խադուրին, ինչպես և Թուրքիայի ու Վրաստանի արտակարգ և լիազոր դեսպանները: Թուրքական մամուլում ոչ պաշտոնական տեղեկություններ կային, թե սահմանային անցակետի բացմանը ներկա էր լինելու նաև Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը, որը, սակայն, արարողությանն այդպես էլ չմասնակցեց: Հաշվի առնելով այն, որ 2 շաբաթից էլ քիչ ժամանակ էր մնացել Թուրքիայում նոր ընտրություններին, սպասելի էր, որ Էրդողանը դժվար թե մասնակցեր նոր անցակետի բացմանը. այս փուլում առավել կարևոր էին ներքաղաքական զարգացումներն ու Քրդական խնդրին առնչվող իրադարձությունները:

Հանդիսավոր արարողությանը ներկա գտնվողներից Թուրքիայի պալատների և բորսաների միության (*TOBB*) ղեկավար Ռիֆաթ Հիսարջըքլըօղլուն անցակետի բացման արարողության ժամանակ շեշտեց դրա կարևորությունը Թուրքիայի համար՝ դեպի Միջին Ասիա ցամաքային կապի տեսանկյունից: «Մի վայրում, որտեղ առևտուր կա, գումար կա, թե գումար էլ կա, հարստություն կա: Ասում էին, թե Չըլդըրից այն կողմ ճանապարհ չկա, սակայն արդեն կա: Դեպի Միջին Ասիա գնացող հարստության ճանապարհ կա: Երբ դուրս ես գալիս Աքթաշի անցակետից, ապա 3 ժամ տևողությամբ տարածքում 17 մլն բնակչությամբ $100 մլրդ արժեցող տնտեսություն կա (այստեղ Հիսարջըքլըօղլուն չմանրամասնեց, թե կոնկրետ որ երկրների մասին է խոսքը– *Գ.Պ.*)»,- բացման արարողությանը հայտարարեց Հիսարջըքլըօղլուն, որը նաև հավելեց, որ Թուրքիային պետք են նոր ավտոճանապարհներ և թունելներ դեպի սահմանային անցակետ, ինչի արդյունքում Ստամբուլի և Թբիլիսիի միջև հեռավորությունը կարող է կրճատվել 330 կմ-ով[7]:

Թուրքիայի մաքսային ծառայության և առևտրի նախարար Ջենափ Աշչըն ևս խոսեց Աքթաշ-Կարծախի միջոցով դեպի երրորդ երկրներ կարճացող ճանապարհի մասին՝ նշելով, որ նոր անցակետը հնարավորություն է տալիս կրճատել դեպի Ռուսաստան ավտոճանապարհը շուրջ 130 կմ-ով, իսկ դեպի Ադրբեջան ցամաքային կապը՝ 200 կմ-ով:

Արդահանի նահանգապետն իր հերթին հայտարարեց, որ նոր անցակետի շնորհիվ կրճատվում է ցամաքային ճանապարհը դեպի Թբիլիսի և Ադրբեջան, ինչպես նաև հնարավորություն է տալիս, որպեսզի գերծանրաբեռնված

[7] “60 yıllık hasret sona erdi, Aktaş sınır kapısı açıldı”, Milliyet, 18.10.2015.

Սարփի անցակետի համար (Սև ծովի ափամերձ հատվածում) այլընտրանք լինի: Վերջինս հավելեց, թե Աքթաշի անցակետի բացումը «60-ամյա երազանք էր», որն ի վերջո իրականացավ[8]: Թուրքական կողմը հույս հայտնեց նաև, որ նոր անցակետի գործարկմամբ հնարավոր կլինի զարգացնել տեղանքում զբոսաշրջությունը: «Սահմանային անցակետերի միջոցով հնարավոր է լինում ավելի մերձենալ: Նոր անցակետը շատ կարևոր դարպասի է վերածվելու»,- իր խոսքում նշեց Վրաստանի էկոնոմիկայի նախարարը, որը նաև հավելեց, թե ներկա է եղել նաև սահմանային անցակետի հիմնարկեքի արարողությանը:

Հատկանշական է, որ թուրք-վրացական նոր սահմանային անցակետի բացումը 2015թ. նոյեմբերի 1-ին նախանշված Թուրքիայի ազգային մեծ ժողովի ընտրություններից առաջ էր, և բացման հանդիսավոր արարողության ընթացքում ևս անդրադարձ եղավ ընտրական գործընթացներին՝ ստանալով նաև քաղաքական և նախընտրական քարոզչության երանգներ: Այս փաստը հաստատեցին ոչ միայն միջոցառմանը ներկա իշխող Արդարություն և զարգացում կուսակցության ներկայացուցիչների հայտարարությունները, այլ նաև քրդամետ, ընդդիմադիր Ժողովուրդների դեմոկրատիա կուսակցությունից (ԺԴԿ)[9] Արդահանը ներկայացնող պատգամավոր Թաշքըն Աքթաշի հայտարարությունը, որում, ողջունելով նոր անցակետի բացումը և շեշտելով դրա կարևորությունը, միևնույն ժամանակ դժգոհություն էր հայտնում, որ իրենց կուսակցության անդամները հրավիրված չեն եղել միջոցառմանը, և նրանց մեկուսացնելու քաղաքականություն է իրականացվել[10]:

Ըստ ներկաների հայտարարությունների և թուրքական մամուլի անդրադարձների՝ սահմանային նոր անցակետի գործարկումը դիտվում է ոչ միայն պետական և միջազգային նշանակությամբ, այլև ընդգծվում է դրա կարևորությունը տեղի՝ Արդահանի և մոտակա շրջանների զարգացման համար, քանի որ այս հատվածը Թուրքիայի ամենաթույլ զարգացած տարածքներից է: Այսպիսով, նոր անցակետի բացումը նպատակ ունի նաև զարգացնել «Սերհաթ» (թուրք.՝ *Serhat*) գոտին, որն ընդգրկում է ՀՀ-ին անմիջապես սահմանակից Կարսի, Արդահանի ու Իգդիրի նահանգները և Թուրքիայի ամենահետամնաց հատվածնե-

[8] Նույն տեղում:

[9] Հատկանշական է, որ թեև 2015թ. հունիսի 7-ի ընտրությունների արդյունքներով ԺԴԿ-ն էր հաղթել Արդահանի նահանգում, սակայն արդեն նոյեմբերի 1-ի ընտրություններով այստեղ հաղթեց ԱԶԿ-ն:

[10] Ardahan Ses Haber, “Aktaş Sınır Kapısı ile ilgili Milletvekili Taşkın Aktaş açıklama yaptı”, http://www.ardahanseshaber.com/aktas-sinir-kapisi-ile-ilgili-milletvekili-taskin-aktas-aciklama-yapti/3075/.

րից է: Արդահանում չեն թաքցնում նաև այն, որ նոր անցակետը հնարավորություն կտա աշխուժացնել առևտուրը և զարգացնել զբոսաշրջությունը:

Անցակետի պաշտոնական բացումից մի քանի օր անց թույլատրվեց նաև բեռնափոխադրումները բեռնատարների համար: Անցակետը մինչ 2016թ. ապրիլ գործելու է 08:00-21:00-ին, իսկ արդեն ապրիլից սկսելու է գործել շուրջօրյա 24 ժամ գրաֆիկով[11]:

Նոր սահմանային անցակետի գործարկման հետ շարունակվում է նաև Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու՝ Ախալքալաքի կայարանի կառուցումը, որը տեղակայված է հայաբնակ քաղաքից հարավ՝ Կարծախ-Ախալքալաք ավտոճանապարհի հարևանությամբ: Միևնույն ժամանակ, երկաթուղին անցնում է սահմանային անցակետի մոտակայքով, որտեղ ևս շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են: Այս ամենի արդյունքում Ախալքալաքը վերածվում է կարևոր տարածաշրջանային տրանսպորտային հանգույցի, ինչը կարող է ակտիվացնել տնտեսությունն այս հատվածում: Այնուամենայնիվ, նման զարգացման հետ մեկտեղ ի հայտ են գալիս թուրքական և ադրբեջանական ազդեցությունների աճի վտանգ, ինչը, կարծում ենք, առանձին հետազոտության թեմա է:

Թեև սահմանային անցակետի բացման արարողության ժամանակ Թուրքիան և Վրաստանը ներկայացնող բարձրաստիճան պաշտոնյաներն առանձին չանդրադարձան նոր անցակետի՝ Հայաստան-Թուրքիա բեռնա- և ուղևորափոխադրումների համար նշանակությանը, սակայն ակնհայտ է, որ Աքթաշ/Կարծախը մեծագույն կարևորություն է ներկայացնում նաև Հայաստանի համար:

Հայաստանի հետ բեռնափոխադրումների համար նոր անցակետի կարևորության մասին, սակայն, հանդիսավոր բացմանը խոսեց ընդդիմադիր Հանրապետա-ժողովրդական կուսակցության (ՀԺԿ) անդամ, Թուրքիայի մաքսային ծառայության և առևտրի նախկին նախարար Էնսար Օղյութը, որը նշեց, թե «նոր սահմանային անցակետը կարող են օգտագործել Հայաստանի հետ առևտրի ակտիվացման համար»: «Հայ հարուստ գործարարները, արևելյան անցակետի փակ լինելու (նկատի ունի Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանային փակ անցակետերը- *Գ.Պ.*) պատճառով, կարող են այս անցա-

[11] UND, “Çıldır – Aktaş Sınır Kapısı TIR Trafiğine Açıldı!”, http://www.und.org.tr/tr/17753/cildir-%E2%80%93-aktas-sinir-kapisi-tir-trafigine-acildi.

կետն օգտագործել առևտրի համար, ինչը կբերի նաև Չըլդըրի բարգավաճմանն ու Արդահանի զարգացմանը»,- հայտարարեց Թուրքիայի մաքսային ծառայության և առևտրի նախկին նախարարը[12]:

Հայաստանյան կողմի համար նոր անցակետի գործարկումը կարևորվում է նրանով, որ ավտոճանապարհային հաղորդակցության տեսանկյունից Հայաստանի և Թուրքիայի միջև հեռավորությունն ու ժամանակը բավական կրճատվում են:

Հայ-վրացական սահմանի Բավրայի սահմանային անցակետից ներկայիս Թուրքիայի Կարս քաղաք հասնելու համար ճանապարհն անցակետի միջոցով կրճատվում է շուրջ 125 կմ-ով և մի քանի ժամով՝ հաշվի առնելով տեղանքի բարդությունները, որտեղով անցնում է Ախալցխան ու Կարսը կապող ճանապարհը:

Գաղտնիք չէ, որ Հայաստանի և Թուրքիայի միջև փակ սահմանների պայմաններում երկու երկրների միջև ակտիվ առևտուր և բեռնափոխադրումներ են իրականացվում, իհարկե, սա ավելի շատ միակողմանի բնույթ է կրում՝ թուրքական արտադրության ապրանքներ՝ հայաստանյան շուկայի համար և/կամ հայաստանցի աշխատողներ՝ Թուրքիայի աշխատանքի շուկայում: Հայաստանն ու Թուրքիան ցամաքային ճանապարհով կապելու տարանցիկ երկրի դերն էլ կատարում է Վրաստանը:

Վրաստանի տարածքն էլ երկուստեք օգտագործվում է ոչ միայն ցամաքային բեռնափոխադրումների, այլ նաև ուղևորափոխադրումների համար: Ուղևորափոխադրումներից օգտվելու նպատակն աշխատանքն է կամ մանր առևտուրը, սակայն քիչ չէ նաև այն հայերի թիվը, ովքեր ցանկանում են այցելել Արևմտյան Հայաստանի պատմամշակութային հուշարձանները: Վերջիններիս համար ոչ միայն զգալի կրճատվում է ճանապարհը, այլ նաև հնարավոր է լինում խուսափել Ախալքալաքից Ախալցխա ոչ դյուրին ճանապարհից, ինչպես նաև թուրքական հատվածի՝ Արդահանի բարձրլեռնային տարածքներով անցնող ճանապարհից:

Իհարկե, սա չի նշանակում, թե Թուրքիա-Վրաստան սահմանի մյուս երկու անցակետերը կորցնում են Հայաստանի համար իրենց նշանակությունը: Հաշվի առնելով սևծովյան մայրուղու հարմարավետությունը խոշոր բեռնա-

[12] Kocaeli Gazetesi, “Ensar Öğüt: Aktaş sınır kapısı açıldığı için çok mutluyum”, http://www.kocaeligazetesi.com.tr/ensar-ogut-aktas-sinir-kapisi-acildigi-icin-cok-mutluyum-649159h.htm.

տարների համար, ինչպես նաև Թուրքիայի արդյունաբերական քաղաքների տեղաբաշխումը, կարելի է սպասել, որ Թուրքիայից Հայաստան բեռնափոխադրումների զգալի մասը, այնուամենայնիվ, կշարունակվի հենց Սարփի անցակետով, որը Սև ծովի ափին է:

Վերադառնալով նոր անցակետի թեմային՝ պետք է նշել, որ Վրաստանի հայաբնակ Ախալքալաք քաղաքից ոչ հեռու բացված անցակետը ստանում է տարածաշրջանային նշանակություն, քանի որ այն նախևառաջ սպասարկում է Վրաստանին, և հատկապես մեր հյուսիսային հարևանի հարավարևմտյան շրջանների համար ավելի հարմար ուղի է առաջարկում:

Նոր անցակետից, ինչպես նշեցինք, որոշակիորեն օգտվելու են Հայաստանի քաղաքացիները, իսկ աշխարհագրական դիրքն ու առավել կարճ հեռավորությունն Ադրբեջանից թույլ կտա նաև այս երկրին օգտվել նոր անցակետից: Բացի այդ, Ախալցխա-Արդահան անցակետից կարող են օգտվել Իրանից բեռներ (հիմնականում վառելիք) տեղափոխող բեռնատարները, որոնց պարագայում Թուրքիան տարանցիկ երկիր է, իսկ Վրաստանը՝ կամ վերջնակետ, կամ կրկին տարանցիկ երկիր: Թուրքիայում սա համարում են ևս մեկ պատուհան՝ ցամաքային կապով Ռուսաստան հասնելու համար, իսկ ռուսաստանյան կողմը Թուրքիայի կարևորագույն առևտրային գործընկերներից է: Բացի աշխարհագրորեն ավելի մոտ պետություններից, Թուրքիան ցանկանում է նաև նոր անցակետն օգտագործել Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու հանրապետություններ հասնելու համար:

Այսպիսով, Թուրքիան ռազմավարական տեսանկյունից կարևոր դարպաս է բացում դեպի Կովկաս, ինչի արդյունքում նախատեսում է աշխուժացնել առևտուրն ու մեծացնել բեռնափոխադրումներն ինչպես ավելի մոտ տարածաշրջաններ (Հարավային Կովկաս, Ռուսաստան), այնպես էլ Միջին Ասիա, հատկապես, թյուրքալեզու հանրապետություններ:

Վերադառնալով Թուրքիայի տարածքով իրանական բեռնափոխադրումների թեմային՝ պետք է փաստել, որ այս տեսանկյունից Հայաստանում կառուցվող Հյուսիս-Հարավ ավտոմայրուղին իրանական մեքենաների համար թուրքական տարանցիկ ճանապարհներին այլընտրանք կարող է դառնալ: Հաշվի առնելով Թուրքիայի և Ռուսաստանի միջև հարաբերություններում առկա վերջին բացասական միտումները՝ կապված Թուրքիայի օդուժի

կողմից ռուսաստանյան Սու-24 գրոհիչի խոցմանը հաջորդած դեպքերի հետ, Հյուսիս-Հարավ մայրուղին կարող է զգալի ավելացնել իր կարևորությունը ռուս-իրանական բեռնափոխադրումների տեսանկյունից: Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ Հյուսիս-Հարավ մայրուղին ժամանակային առումով որոշակիորեն հետ է մնում, սակայն այս նախագծի կենսագործումն ու դրա ճիշտ կիրառումը կարող են բարձրացնել Հայաստանի՝ տարանցիկ երկրի դերը և այս առումով մրցակցություն ստեղծել Հայաստանի հետ սահմանը փակած Թուրքիայի հետ:

ԹՈՒՐՔԻԱՅԻ
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
2016թ. հունվար

Հայկ Գաբրիելյան[*]

Թուրքիա-Ռուսաստան - Հունվարին Ռուսաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունները շարունակեցին մնալ լարված: Հունվարի 1-ին ուժի մեջ մտան Թուրքիայի դեմ Ռուսաստանի սահմանած սննդային սահմանափակումները և վիզային ռեժիմը, ինչը խնդիրներ ստեղծեց նաև ավիահաղորդակցության ոլորտում: Թուրքիայի տրանսպորտի նախարար Բինալի Յըլդըրըմը Ռուսաստանին մեղադրեց «միջազգային ավիացիոն նորմերը խախտելու» համար՝ «կամայականություն» որակելով թուրքական ավիաընկերությունների անձնակազմերի համար վիզայի անհրաժեշտության հարցը, ինչի պատճառով թուրքական մի շարք ավիաընկերություններ (*Pegasus Airlines, Onur Air*) ժամանակավորապես դադարեցրին չվերթները Ռուսաստան:

Թուրքական մամուլը հունվարին գրեց, որ ռուսական «Գազպրոմ» ընկերությունը չեղյալ է հայտարարել թուրքական մասնավոր ընկերությունների համար 2015թ. տված գազային զեղչը: Խոսքը թուրքական վեց (*Bosphorus Gaz, Enerco Enerji, Batı Hattı, Kibar Enerji, Avrasya Gaz և Shell Enerji Rusya*) մասնավոր ընկերության մասին է, որոնք 2015թ. հունվարի 1-ից օգտվել են 10.25%-անոց զեղչից: Դրանք 2013-ից միասին տարեկան ներկրում են 10 մլրդ մ^3 ռուսական գազ: Հիշեցնենք, որ թուրքական մասնավոր այդ ընկերությունները ռուսական գազ ներկրում են Արևմտյան (Անդրբալկանյան) գազատարով, որը Թուրքիա մուտք գործող 4 հիմնական գազատարներից մեկն է: Դրանից առաջ թուրքական կողմը գազային զեղչ էր պահանջել Ռուսաստանից, սակայն չստանալով այն՝ չէր երկարաձգել 1986թ. 25 տարով կնքված գազային համաձայնագիրը, որով *BOTAŞ* պետական խողովակաշարային ընկերությունը տարեկան ներկրում էր 6 մլրդ մ^3 գազ: Ի դեպ, *BOTAŞ*-ը 2015թ. հոկտեմբերին դիմել է միջազգային միջնորդ դատարան՝ բողոքարկելով ռուսական գազի գինը:

[*] Թուրքագետ:

Հունվարին Ռուսաստանի էներգետիկայի նախարար Ալեքսանդր Նովակը հայտարարեց, թե Ռուսաստանը պատրաստ է «Թուրքական հոսք» գազատարի նախագծի իրագործմանը՝ պայմանով, որ եվրոպացի և թուրք գործընկերները հետաքրքրություն ցուցաբերեն դրա նկատմամբ: Թուրքիայի էներգետիկայի նախարար Բերաթ Ալբայրաքն իր հերթին հույս հայտնեց, որ կշարունակվի Ռուսաստանի հետ էներգետիկ, այդ թվում նաև ատոմային նախագծերի իրագործումը:

Հունվարին Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը հայտարարեց, թե ընդլայնվելու են շինարարական ոլորտում Թուրքիայի դեմ սահմանափակումները: Ոլորտում ներկայումս աշխատում է 300 թուրքական ընկերություն՝ $50 մլրդ-ի պայմանագրերով: Պուտինի խոսքերով՝ դրա շնորհիվ Ռուսաստանում կստեղծվի 87.000 աշխատատեղ: Ակնկալվում է, որ 2016թ. ռուսական պատժամիջոցների պատճառով Թուրքիայի տնտեսական վնասները կկազմեն $4 մլրդ: Թուրքիան, սակայն, մտադիր է ռուսական պատժամիջոցների կապակցությամբ բողոք հղել ԱՀԿ-ին: Հունվարին Թուրքիայի դեմ պատժամիջոցներին միացավ նաև Աբխազիան:

Հունվարին չկայացավ Ռուսաստանի փոխարտգործնախարար Վասիլի Նեբենզյայի այցը Ստամբուլ՝ ՄԾՏՀԿ նիստին մասնակցելու համար, որտեղ կազմակերպության նախագահությունը կես տարով հանձնվեց Ռուսաստանին: Ավելի վաղ հաղորդվել էր, որ այցը դառնալու է Թուրքիայի կողմից «Սու-24»-ի խոցումից հետո Ռուսաստանից Թուրքիա բարձրամակարդակ առաջին այցը:

Քաղաքական. Հունվարին Ռուսաստանը և Թուրքիան շարունակեցին փոխանակել մեղադրանքներ, որոնք ավելի ու ավելի հնչեղ են դառնում՝ չնայած Թուրքիայի արտգործնախարար Մևլյութ Չավուշօղլուն հայտարարել է, թե պատրաստ է ցանկացած ժամանակ հանդիպել Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովի հետ: Թուրքիայի վարչապետ Ահմեթ Դավութօղլուն Ռուսաստանին մեղադրեց «սիրիացի փախստականների մահվան» համար, որոնք գրեթե ամեն օր խեղդվում են Էգեյան և Միջերկրական ծովերով Եվրոպա հասնելու փորձի ժամանակ: ՌԴ ԱԳՆ-ն իր հերթին հայտարարեց, որ ԵՄ-ում ներգաղթյալների հոսքն աճել է Թուրքիայի պատճառով, որն աջակցում է Սիրիայում գործող ահաբեկչական և ծայրահեղական խմբավորումներին: Մեկ այլ դեպքում Դավութօղլուն հայտարարեց, որ եթե Ռուսաստանը չի կարողանում Սիրիայի տարածքում ամբողջովին ոչնչացնել ԻՊ-ին,

ապա թող Թուրքիային թույլ տա անել դա: Դավութօղլուի այս խոսքերը կարելի է մեկնաբանել միայն որպես Թուրքիայի կողմից Սիրիա ցամաքային ռազմական ներխուժում ձեռնարկելու ցանկության արտահայտություն, սակայն Ռուսաստանը դարձել է զսպիչ գործոն: Թուրքիան այդ ներխուժումը ցանկանում է իրականացնել ենթադրաբար ԻՊ վերահսկած Ազեզ-Ջերաբլուս հատվածում (98 կմ):

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Էրդողանն իր հերթին հայտարարեց, թե «Ռուսաստանը չի պայքարում ԻՊ-ի դեմ և ձգտում է Լաթաքիայում ստեղծել իրեն ենթակա զաճաճ պետություն»: Բացի այդ, նա հայտարարեց, թե «Թուրքիան Ռուսաստանին թույլ չի տա Սիրիայի հյուսիսում կառուցել նոր ռազմակայան»՝ մեկնաբանելով այն լուրերը, որ մոտ 100 ռուս զինծառայող ու փորձագետ է հայտնվել Սիրիայի հյուսիս-արևելքում գտնվող Քամըշլը քրդաբնակ քաղաքի շրջանում, որոնց հետաքրքրել է տեղի լքյալ օդանավակայանը:

Ինչ վերաբերում է ռուսական կողմի հայտարարություններին, ապա ՌԴ ԱԳՆ-ն հայտարարեց, որ Թուրքիան քողարկված խաղ է տանում տարածաշրջանում՝ հետապնդելով նեղ շահեր, նկատելով, որ Հալեպի նահանգի զինյալները համալրում են ստացել Թուրքիայից: Բացի այդ, ՌԴ ԱԳՆ-ն Թուրքիային կոչ արեց դադարեցնել երկրի քրդաբնակ շրջաններում խաղաղ բնակչության ոչնչացումը: Պուտինն իր հերթին հայտարարեց, որ «Սու-24»-ի դեպքից հետո ՆԱՏՕ-ում պաշտպանություն որոնելու գործողությունները ստորացուցիչ են Անկարայի համար՝ հաշվի առնելով այն, որ Թուրքիայի վրա ոչ ոք չի հարձակվել: Այստեղ պետք է նշել, որ Թուրքիան սիրիական հակամարտության ընթացքում շարունակ փորձել է սահմանային սադրանքների միջոցով ՆԱՏՕ-ին ներքաշել դրանում՝ գործելու համար ՆԱՏՕ-ի քողի ներքո և հետապնդելով նեղ շահեր, սակայն ՆԱՏՕ-ն տուրք չի տվել դրանց: Թուրքիան այժմ էլ փորձում է ՆԱՏՕ-ին ներքաշել Ռուսաստանի հետ հակամարտությունում (Դավութօղլուն հայտարարել է, թե Թուրքիայի օդային տիրույթի խախտումը, ՆԱՏՕ օդային տիրույթի խախտում է, և որ այս իրավիճակում առաջնային պլան պետք է դուրս գա ՆԱՏՕ-ն): Արևմտյան մամուլը, փորձագիտական շրջանակները նշում են, որ Թուրքիան հատել է «կարմիր գիծը», դարձել անհուսալի գործընկեր, և թերևս ժամանակն է բարձրացնելու Թուրքիային ՆԱՏՕ-ից վտարելու հարցը: Թուրքիան վերջին շրջանում ՆԱՏՕ-ի համար վերածվել է լուրջ գլխացավանքի:

Հունվարի վերջին Թուրքիան վերստին Ռուսաստանին մեղադրեց իր օդային տիրույթը խախտելու համար, ինչի կապակցությամբ Անկարայում Ռուսաստանի դեսպան Անդրեյ Կառլովը կանչվեց Թուրքիայի ԱԳՆ, իսկ Էրդողանը վերստին Պուտինի հետ հանդիպելու ցանկություն հայտնեց: Թուրքական կողմի պնդմամբ՝ ռուսական «Սու-34» մարտական ինքնաթիռը, չնայած ռուսերեն և անգլերեն արված զգուշացումներին, խախտել է Թուրքիայի օդային տիրույթը: Թուրքական կողմն այս անգամ չի հայտնել, թե որ հատվածում է գրանցվել միջադեպը և որքան ժամանակով է խախտվել իր օդային սահմանը: Ռուսաստանը հերքել է իր ինքնաթիռի կողմից Թուրքիայի օդային սահմանի խախտումը: Այստեղ, եթե անգամ ընդունենք, որ Թուրքիան ճիշտ է և խնդրին նայենք նրա տեսանկյունից, ապա ծագում են մի շարք հարցեր:

Թուրքիա-ԱՄՆ - 2016թ. հունվարը լեցուն էր թուրք-ամերիկյան բարձրամակարդակ շփումներով: ԱՄՆ զինված ուժերի միացյալ շտաբների ղեկավար Ջոզեֆ Դանֆորդը ժամանեց Թուրքիա, այցելեց Ինջիրլիքի ավիաբազա, հանդիպումներ ունեցավ իր թուրք գործընկեր Հուլուսի Աքարի և Ահմեդ Դավութօղլուի հետ: Հանդիպումների օրակարգում երկու հիմնական հարց է եղել՝ Բաշիքայի ճամբարում (Իրաք) Թուրքիայի կողմից զորք տեղակայելը, որը հարուցում է ԱՄՆ մտահոգությունը, և ԱՄՆ-ի կողմից Սիրիայի քրդերի Դեմոկրատական միություն կուսակցությանն (PYD) աջակցելը, որը հարուցում է Թուրքիայի մտահոգությունը: Բացի այդ, կողմերի ուշադրության կենտրոնում են գտնվել թուրք-սիրիական սահմանի վերահսկողությունը, ռուս-թուրքական լարված հարաբերությունները, ԻՊ-ի դեմ պայքարը:

Հունվարին հեռախոսազրույց տեղի ունեցավ ԱՄՆ և Թուրքիայի նախագահներ Բարաք Օբամայի և Ռեջեփ Էրդողանի միջև, որի ժամանակ նրանք կողմ արտահայտվեցին ահաբեկչության դեմ պայքարում համագործակցության խորացմանը: Օբաման դատապարտեց Ստամբուլի և Դիարբեքիրի ահաբեկչական հարձակումները: Օբաման Իրաքի վարչապետ Հայդար ալ-Աբադիի հետ հունվարին տեղի ունեցած հեռախոսազրույցի ժամանակ Թուրքիային կոչ էր արել Իրաքից դուրս բերել իր զորքը՝ ընդգծելով, որ ԱՄՆ-ը աջակցում է Իրաքի տարածքային ամբողջականությանն ու ինքնիշխանությանը և Թուրքիային կոչ էր արել անել նույնը:

Հունվարին հաղորդվեց, որ Էրդողանը մարտի 31-ին մեկնելու է ԱՄՆ՝ մասնակցելու Մերիլենդ նահանգում իսլամա-օսմանյան համալիրի բացմա-

նը: Հունվարին երկօրյա այցով Թուրքիա ժամանեց ԱՄՆ փոխնախագահ Ջոզեֆ Բայդենը, որն Էրդողանի և Դավութօղլուի հետ քննարկեց ԻՊ-ի դեմ պայքարում ավելի սերտ համագործակցության հնարավորությունները, Թուրքիայի և Իրաքի միջև առաջացած լարվածությունը, Քրդստանի աշխատավորական կուսակցության (*PKK*) դեմ պայքարը: Բայդենը կրկնեց ԱՄՆ այն դիրքորոշումը, թե *PKK*-ն և *PYD*-ը տարբեր բաներ են, մինչդեռ Դավութօղլուն պնդեց, թե «*PKK*-ն ու *PYD*-ը նույնն են, երկուսն էլ ահաբեկչական կազմակերպություն են»:

Հունվարին Պենտագոնի ղեկավար Էշթոն Քարթերը հայտարարեց, թե ԱՄՆ-ը անբավարար է համարում ԻՊ-ի դեմ պայքարում Թուրքիայի ջանքերը՝ գտնելով, որ այն կարող է անել ավելին՝ կապված Իրաքի և Սիրիայի հետ իր երկար, անպաշտպան սահմանով երկու ուղղությամբ զինյալների շարժի հետ: Թուրքիան շարունակում է հրաժարվել փակել Սիրիայի հետ սահմանը:

Թուրքիա-ԵՄ - Հունվարին Թուրքիան վիզային ռեժիմ սահմանեց երրորդ երկրներից ժամանող սիրիացիների համար, ինչը, սակայն, չտարածվեց այն սիրիացիների վրա, որոնք հատում են Թուրքիայի հետ ցամաքային սահմանը: Թուրքիայի՝ Եվրամիության հարցերով նախարար Վոլքան Բոզքըրը հայտարարեց, որ իրենք պլանավորում են սիրիացի փախստականներին աշխատելու թույլտվություն տալ, ինչը կօգնի նրանց հարմարվել երկրում: Չնայած այդ ամենին՝ Եվրոպական հանձնաժողովի նախագահի առաջին տեղակալ Ֆրանս Թիմերմանսը, որը հունվարին այցելեց Թուրքիա, հայտարարեց, որ Եվրոպան գոհ չէ նրանից, թե Անկարան ինչպես է լուծում փախստականների խնդիրները:

Հունվարին Գերմանիայի արտգործնախարար Ֆրանկ Վալտեր Շտայնմայերը հայտարարեց, որ Թուրքիան Եվրոպայի միգրացիոն խնդրի լուծման բանալին է (ի դեպ, Թուրքիան բանալի երկիր են համարում նաև ԻՊ խնդրի լուծման հարցում՝ կապված Սիրիայի սահմանը փակելու հետ). «Մենք ունենք Թուրքիայի կարիքը, եթե ցանկանում ենք այս տարի լրջորեն նվազեցնել Եվրոպա փախստականների հոսքը»: Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելն իր հերթին անհրաժեշտ համարեց հնարավորինս արագ իրագործել փախստականների խնդրի հաղթահարման վերաբերյալ ԵՄ-Թուրքիա պլանը:

Die Welt-ին տված հարցազրույցում Ավստրիայի արտգործնախարար Սեբաստիան Կուրցը հայտարարեց, թե ԵՄ-ը վտանգավոր կախվածության մեջ է ընկել Թուրքիայից՝ կապված միգրացիոն ճգնաժամի լուծման հետ:

Հունվարին կիպրական մամուլը հայտնեց, որ թուրքերենը կարող է դառնալ ԵՄ 25-րդ պաշտոնական լեզուն: Կիպրոսի նախագահ Նիկոս Անաստասիադիսը կառավարությանը հանձնարարել է զբաղվել այդ հարցով՝ ԵՄ պատկան մարմիններին դիմելով, որպեսզի թուրքերենն ամրապնդվի որպես կազմակերպության հերթական պաշտոնական լեզու: Ինքնահռչակ Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության նախագահ Մուսթաֆա Աքընջը ողջունել է այդ նախաձեռնությունը:

Հունվարին Թուրքիա այցելեցին ԵՄ դիվանագիտության ղեկավար Ֆեդերիկա Մոգերինին և ԵՄ ընդլայնման ու հարևանության քաղաքականության հարցերով եվրահանձնակատար Յոհաննես Հահնը: Նրանք Թուրքիայում քննարկեցին ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության գործընթացը, վիզային ռեժիմի ազատականացումը, փախստականների հոսքի խնդիրը, Թուրքիայի քրդաբնակ շրջանների դեպքերը, Թուրքիայում մարդու իրավունքների հարցը: Խոսելով ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության վերաբերյալ բանակցային գործընթացի մասին՝ Մոգերինին հայտարարեց, թե վերջին շրջանում բացվել է բանակցային նոր գլուխ, ինչը շատ կարևոր է: Մոգերինիի խոսքով՝ Թուրքիայի համար Եվրոպան առևտրային ամենամեծ գործընկերն է, և կողմերը կշարունակեն քայլեր ձեռնարկել հարաբերությունների խորացման ուղղությամբ: 3 մլրդ եվրոյի հետ կապված՝ Մոգերինին հայտարարեց, որ այդ գումարը Թուրքիային կհատկացվի ոչ թե որպես «գրպանի ծախս», այլ նախատեսված կլինի փախստականների կարիքների համար: Ընդգծվում է, որ Մոգերինին ցանկացել է այցելել Թուրքիայի քրդաբնակ շրջաններ՝ ռազմական գործողությունների գոտի, սակայն նրան թույլ չեն տվել անել դա, և Մոգերինին ափսոսանք է հայտնել այդ կապակցությամբ:

Թուրքիա-Իրան, Սաուդյան Արաբիա - Հունվարին շարունակեցին սրվել թուրք-իրանական առանց այդ էլ լարված հարաբերությունները: Մինչ այդ իրանական կողմը դատապարտել էր Թուրքիայի կողմից ռուսական ինքնաթիռի խոցումը և Իրաքում զորք տեղակայելը, իսկ հունվարին տեղի ունեցավ Իրանի և վերջին շրջանում հարաբերությունները Թուրքիայի հետ սերտացրած Սաուդյան Արաբիայի միջև հարաբերությունների սրացում: Թուրքիայի ԱԳՆ-ն մտահոգություն հայտնեց Իրանի և Սաուդյան Արաբիայի միջև աճող հակամարտության կապակցությամբ և նրանց հանդարտության, զգուշավորության ու «դիվանագիտական լեզվին» վերադարձ կատարելու կոչ արեց:

Թուրքիայի փոխվարչապետ Նուման Քուրթուլմուշը հայտարարեց, թե իրենք դեմ են ցանկացած մահապատժի, հատկապես երբ դա ունի քաղաքական շարժառիթներ՝ հավելելով, որ իրենք չեն ուզում, որ Սաուդյան Արաբիան և Իրանը հակամարտեն: Էրդողանն անթույլատրելի համարեց Թեհրանում Սաուդյան Արաբիայի դեսպանատան վրա կատարված հարձակումը՝ նշելով, որ Իրանի իշխանություններն անհրաժեշտ միջոցներ չեն ձեռնարկել դրա պահպանման համար:

Թուրքական մամուլը հայտնեց, որ Անկարայում Իրանի դեսպանը կանչվել է Թուրքիայի ԱԳՆ: Իրանական կողմը, սակայն, հերքեց իր դեսպանին Թուրքիայի ԱԳՆ կանչելը՝ հայտարարելով, որ Անկարայում Իրանի դեսպան Ալիռեզա Բիգդելին ինքն է հանդիպում խնդրել Թուրքիայի ԱԳՆ-ում, որպեսզի ներկայացնի տարածաշրջանի վերջին դեպքերի շուրջ Իրանի դիրքորոշումը:

Հունվարին Մևլյութ Չավուշօղլուն քննադատեց Իրանին՝ հայտարարելով, որ «Իրանի կողմից սիրիական վարչակարգին աջակցելը նպաստում է Սիրիայում խաղաղ բնակչության շրջանում զոհերի թվի մեծացմանը»: Էրդողանը նույնպես քննադատեց Իրանին՝ հայտարարելով, թե «Իրանը փորձում է միջդավանաբական ատելությունը վերածել կոնֆլիկտների, միտումնավոր գնում է Պարսից ծոցի երկրների հետ հարաբերությունների սրացմանը, աշխատում է վառել վտանգավոր գործընթացի պատրույգը» (Դավութօղլուի խոսքերով՝ Թուրքիան Իրանին իրեն հակառակորդ չի համարում՝ չնայած Սիրիայի և Իրաքի հարցերում առկա տարաձայնություններին):

Ուշագրավ է, որ Էրդողանը 2015թ. վերջին հայտարարել էր, թե վերջնական չի համարում Իրանի և «վեցյակի» միջև ձեռք բերված «միջուկային» համաձայնագիրը: Էրդողանի վերջին հայտարարություններից կարելի է եզրակացնել, որ նա հուսահատ ջանքեր է գործադրում տարածաշրջանում Իրանի ազդեցությունը սահմանափակելու ուղղությամբ: Էրդողանը տեսել է, որ Թուրքիան մերձավորարևելյան տարածաշրջանում խստապես տանուլ է տվել Իրանի հետ մրցակցությունը, որն այդ ժամանակ գտնվել էր միջազգային պատժամիջոցների տակ, որոնց զգալի մասն արդեն վերացված է, և ակնկալվում է տարածաշրջանում Իրանի ազդեցության կտրուկ մեծացում, ինչը չի կարող չզայրացնել Թուրքիային, ինչպես նաև Սաուդյան Արաբիային: Իրանի (նաև Սիրիայի և Իրաքի) հարցում ընդհանուր շահեր ունեցող սուննի այս երկու երկրների իշխանությունները միավորել են իրենց ջանքերը և այժմ տար-

բեր կերպ փորձում են Իրանին ներքաշել սադրանքների մեջ՝ նրան «ագրեսորի» կերպար հաղորդելու համար, որպեսզի փորձեն թույլ չտալ, որ այն վայելի «վեցյակի» հետ միջուկային գործարքի պտուղները:

Թուրքիա-Սիրիա, Իրաք - Հունվարին Դավութօղլուն և Չավուշօղլուն հայտարարեցին, թե Թուրքիան դեմ է Ժնևում կայանալիք միջսիրիական բանակցություններին *PYD* մասնակցությանը՝ ընդգծելով, որ այդ բանակցությունների մասնակիցների խմբերի ձևավորման ժամանակ չպետք է թույլ տալ ահաբեկչական կազմակերպությունների մասնակցությունը: Չավուշօղլուն հայտարարեց, թե Թուրքիան կբոյկոտի Սիրիայի վերաբերյալ բանակցությունները՝ *PYD* մասնակցության դեպքում: Այդ քայլն արդյունք տվեց. *PYD*-ը չստացավ հրավեր: Հայտարարվեց, որ այն հրավեր կստանա քիչ ավելի ուշ:

Հունվարին հաղորդվեց, թե թուրք զինվորականների խումբը հարվածի է ենթարկվել Սիրիայում ԻՊ վերահսկած գոտուց, ինչից հետո Թուրքիան տանկերով ու հրետանով հասցրել է պատասխան հարված: Սիրիան բողոք հղեց ՄԱԿ-ին՝ Թուրքիային մեղադրելով վերջին 5 տարում իր սահմանները բազմիցս խախտելու, ագրեսիվ ակցիաներ իրականացնելու, սահմանով աշխարհի տարբեր երկրներից վարձկանների հոսքին նպաստելու համար: Սիրիայի արտգործնախարար Վալիդ Մուալեմը հայտարարեց, թե Թուրքիան, իր սահմանները բաց պահելով ահաբեկչական խմբերի առջև, սպառնալիքի տակ է դրել իր իսկ անվտանգությունը՝ այդպես էլ դասեր չքաղելով նրանից, որ ահաբեկիչները հետ են վերադառնում իր մոտ:

Հունվարին հաղորդվեց, որ ԻՊ-ը հարձակվել է Բաշիքայի ճամբարի վրա, սակայն թուրք զինվորականները հետ են մղել գրոհը: Իրաքյան կողմը հերքել է դա: Հայդար ալ-Աբադին հայտարարեց, թե Թուրքիան մտադիր է տարածաշրջանի տարածքներում վերստեղծել Օսմանյան կայսրությունը: Աբադին ընդգծել էր, որ Բաղդադում չեն տեսնում ապացույցներ, թե Թուրքիան պայքարում է ԻՊ-ի դեմ:

Թուրքիա – Եգիպտոս, Իսրայել, Հունաստան - Հունվարին Հունաստանն ու Իսրայելը միացան ԻՊ-ից նավթ գնելու հարցում Թուրքիային մեղադրող երկրների թվին՝ այդ մասին հայտարարություններ անելով պաշտպանության նախարարներ Պանոս Կամենոսի և Մոշե Յաալոնի մակարդակով: Կամենոսը Թուրքիային մեղադրեց նաև Հունաստանի օդային տիրույթը խախտելու համար: Հունվարին շարունակվեցին թուրք-իսրայելական հարաբերությունների

կարգավորմանն ուղղված բանակցությունները: Անգամ հաղորդվեց, որ Դավոսի ֆորումի շրջանակներում կարող է տեղի ունենալ Նեթանյահու-Դավութօղլու հանդիպում, որը կդառնա վերջին 7 տարում Իսրայելի և Թուրքիայի առաջնորդների առաջին հանդիպումը: Չավուշօղլուն հունվարին հայտարարեց, թե հարաբերությունների կարգավորման համար Իսրայելը պետք է կատարի Թուրքիայի 3 նախապայմաններից մնացյալ երկուսը («Մավի Մարմարայի» միջադեպի համար ներողություն խնդրելուց բացի, պետք է վճարի նաև փոխհատուցում և վերացնի Գազայի հատվածի շրջափակումը): Իսրայելական մամուլի հաղորդմամբ՝ Եգիպտոսն Իսրայելից պահանջել է պարզաբանել Թուրքիայի հետ հաշտեցման նախագծի մանրամասները: Եգիպտոսին մասնավորապես հետաքրքրել է, թե Իսրայելն արդյոք պատրաստ է թույլատրել Գազայի հատվածում Թուրքիայի ազդեցության մեծացում:

Հունվարին Եգիպտոսը Թուրքիայից պահանջեց դադարեցնել իր ներքին գործերին միջամտելը, ընդունել ստեղծված ստատուս քվոն և փոխարենն ուշադրություն դարձնել մարդու իրավունքների խախտումների վրա: Դրանից առաջ Թուրքիայի նախագահի պաշտոնական ներկայացուցիչ Իբրահիմ Քալընը հայտարարել էր, թե Եգիպտոսի քաղաքական իրադարձությունները ռազմական հեղաշրջման հետևանքն են: Հունվարին թուրքական մամուլը գրեց, որ Սաուդյան Արաբիայի միջնորդությամբ անցկացված բանակցությունների ժամանակ Թուրքիայի իշխանությունները մոտեցել են նրան, որ օրինական ճանաչեն Եգիպտոսի նախագահ Աբդել Ֆաթահ ալ-Սիսիի կառավարումը՝ պայմանով, որ Եգիպտոսի կառավարությունը չեղյալ հայտարարի «Մուսուլման-եղբայրներ» շարժման անդամների մահապատժի վճիռը:

Թուրքիա-Վրաստան, Ադրբեջան - Հունվարին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը Դավոսի ֆորումի շրջանակներում հանդիպեց Դավութօղլուի հետ և քննարկեց Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցն ու փոխադարձ հետաքրքրության կենտրոնում ընկած այլ հարցեր: Հունվարին տեղի չունեցավ Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի արտգործնախարարների եռակողմ հանդիպումը, որը պետք է անցկացվեր դեռևս նախորդ տարվա դեկտեմբերի վերջին: Հաղորդվեց, որ հանդիպումը Թբիլիսիում կկայանա փետրվարի 19-ին: Ուշագրավ է, որ նույն օրը Թուրքիայի Քայսերի քաղաքում տեղի է ունենալու երեք երկրների էկոնոմիկայի նախարարների հանդիպումը, որին մասնակցելու է նաև այդ երկրները ներկայացնող շուրջ 500 գործա-

բար: Հունվարին հայտնի դարձավ, որ Վրաստանը, Ադրբեջանն ու Թուրքիան եռակողմ մեխանիզմի ստեղծման միջոցով մեղմացնում են Բաքու-Թբիլիսի-Կարս (ԲԹԿ) երկաթուղով բեռնափոխադրումների համար մաքսային ընթացակարգերը: Բացի այդ, նրանք պետք է հստակեցնեն ԲԹԿ շահագործման պայմաններն ու սակագնային քաղաքականությունը:

Ադրբեջանում Թուրքիայի դեսպան Իսմայիլ Ալփեր Ջոշքունը հունվարին հայտարարեց, թե Թուրքիան պատրաստ է մասնակցել Ադրբեջանում պետական գույքի մասնավորեցման գործընթացին (ավելի վաղ հաղորվել էր, որ Ադրբեջանում կիրականացվի պետական գույքի մասնավորեցման մասշտաբային գործընթաց): Բացի այդ, նա հայտարարեց, որ 2016-ը Թուրքիայի և Ադրբեջանի հարաբերություններում կդառնա էներգետիկայի և տրանսպորտի տարի, և որ ԲԹԿ բացումը տեղի կունենա այս տարի: Հայտնի է, որ ԲԹԿ ադրբեջանական և վրացական հատվածները պատրաստ են, և որ պատրաստ չէ միայն թուրքական հատվածը: Ըստ ամենայնի՝ Թուրքիան միտումնավոր է ձգձգում, քանի որ Ադրբեջանը շարունակ չի համաձայնում վերացնել Թուրքիայի հանդեպ միակողմանի վիզային ռեժիմն ու ստորագրել ազատ (արտոնյալ) առևտրի ռեժիմ: Սակայն Ռուսաստանի հետ հարաբերությունների, այդ թվում նաև առևտրային, կտրուկ վատթարացումը կարող է Թուրքիային մղել ԲԹԿ իր հատվածի կառուցումն արագացնելուն, որով Ադրբեջանի միջոցով դուրս կգա նաև Կենտրոնական Ասիա:

ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2016թ. հունվար

Ջոնի Մելիքյան[*]

Վրաստանի արտաքին քաղաքական կյանքը հունվարին բավական պասիվ էր՝ անցած տարեվերջին Վրաստանի նորացված կառավարության և նոր վարչապետի հաստատմամբ պայմանավորված: Երկրի նոր վարչապետ ընտրվեց նախկին արտգործնախարար Գեորգի Կվիրիկաշվիլին: Նրան Վրաստանի ԱԳՆ ղեկավարի պաշտոնում փոխարինեց Ռուսաստանի Դիվանագիտական ակադեմիայի շրջանավարտ Միխայիլ Ջանելիձեն: Հունվարի հիմնական իրադարձությունների շարքում հարկ է առանձնացնել Վրաստանի կառավարական պատվիրակության մասնակցությունը Դավոսի Համաշխարհային տնտեսական համաժողովի (ՀՏՀ) միջոցառումներին և հանդիպումները գործընկեր պետությունների ղեկավարների հետ, վրաց-թուրքական բանակցություններն Անկարայում մաքսային վարչարարության նոր մոդելի վերաբերյալ, Եվրախորհրդարանի բանաձևը Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի՝ ԵՄ-ին ասոցիացվելու համաձայնագրի իրականացման մասին, ինչպես նաև վրաց-ռուսական հարաբերությունների սառեցման հերթական փուլը:

Վրաստանի կառավարության նոր ղեկավարի առաջին արտասահմանյան այցի նպատակը մասնակցությունն էր հունվարի 20-23-ին Դավոսում տեղի ունեցած համաշխարհային տնտեսական համաժողովին: Այցի շրջանակում Վրաստանի վարչապետը հանդիպեց մի շարք երկրների նախագահների և կառավարությունների ղեկավարների (Շվեյցարիայի նախագահ Յոհան Շնայդեր-Ամանի (*Johann N. Schneider-Ammann*), Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի, Ղազախստանի և Նիդեռլանդների վարչապետներ Քարիմ Մասիմովի և Մարկ Ռյուտեի) հետ: Գեորգի Կվիրիկաշվիլին հանդիպեց նաև ԱՄՆ պետքարտուղարի օգնական Վիկտորյա Նուլանդի, Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Թոնի Բլերի և խոշոր կորպորացիաների ու բանկերի ղեկա-

[*] «Նորավանք» ԳԿՀ փորձագետ:

վարների (*Tata Sons LTD* ընկերության նախագահ Սայրուս Միսթրիի (*Cyrus P Mistry*), *Washington State Investment Board* ընկերության գործադիր տնօրեն Թերեզա Վիթմարշի (*Theresa J. Whitmarsh*), Եվրոպական ներդրումային բանկի նախագահ Վերներ Հոյերի Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի նախագահ Սումա Չաքրաբարթի) հետ:

ԱՄՆ պետքարտուղարի օգնական Վիկտորյա Նուլանդի հետ հանդիպման ժամանակ քննարկվել են երկկողմանի հարաբերությունների «կարևոր» հարցեր և երկու երկրների տնտեսական համագործակցության խորացման հեռանկարները: Ինչպես տեղեկացրել են Վրաստանի կառավարության աշխատակազմում, ԱՄՆ պետքարտուղարի՝ Եվրոպայի և Եվրասիայի գործերով օգնականը «լիակատար աջակցություն» է հայտնել Վրաստանի կառավարությանը ԵՄ-ին և ՆԱՏՕ-ին ինտեգրման ճանապարհին: Բացի այդ, կողմերը քննարկել են նաև որպես Վրաստանի վարչապետ Կվիրիկաշվիլու ԱՄՆ կատարելիք առաջին այցի հնարավորությունը:

Հարկ է նշել Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հետ հանդիպումը. Վրաստանի վարչապետը և նա քննարկել են «երկկողմ հարաբերությունների և ռազմավարական համագործակցության» զարգացման հարցեր: «Իլհամ Ալիևի հետ հանդիպումն անցել է բարեկամական և ջերմ մթնոլորտում: Մենք, իսկապես, չենք խոսել գազի մատակարարումների մասին: Միակ բանը, որ կնշեմ, այն է, որ դա զուտ տեխնիկական բնույթի հարց է: Բացարձակապես ոչ մի տարաձայնություն մեր պետությունների միջև չկա: Ընդհակառակը, մենք տրամադրված ենք շատ լավատեսորեն, համատեղ նախագծերով, որոնք իրականացնում ենք՝ «Մետաքսի ճանապարհ» նախագիծը, Բաքու-Թբիլիսի-Կարսը... Մենք կստեղծենք մեր երկրների տնտեսական աճի կարևոր աղբյուր»,- ասել է Կվիրիկաշվիլին հանդիպման արդյունքներն ամփոփելով:

Վրաստանի վարչապետը նշել է նաև, որ Ադրբեջանի նախագահը հրավեր է ստացել և առաջիկայում հերթական անգամ կայցելի Վրաստան: Այս փաստը հետաքրքիր է նրանով, որ Իլհամ Ալիևը վերջին անգամ պաշտոնական այցով Վրաստանում է եղել 2015թ. նոյեմբերի 5-6-ին: Այցի շրջանակում Ի.Ալիևը հանդիպել է իր վրացի պաշտոնակցի՝ Գեորգի Մարգվելաշվիլու, այժմ արդեն նախկին վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու և խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուպաշվիլու հետ: Ադրբեջանի նախագահը հանդիպում

է ունեցել նաև իշխող «Վրացական երազանք» կոալիցիայի ոչ ֆորմալ ղեկավար, նախկին վարչապետ Բիձինա Իվանիշվիլու հետ:

Այն ժամանակ այցն անցկացվում էր ռուսաստանյան «Գազպրոմի» հետ Վրաստանի էներգետիկայի նախարարության գազային բանակցությունների (Վրաստանի տարածքով Հայաստանի համար ռուսական գազի տարանցումն ապահովելու մասին հերթական պայմանագրի ստորագրման, ինչպես նաև երկրի էներգետիկ աճող կարիքների բավարարման համար ռուսական երկնագույն վառելիքի հավելյալ առևտրային ծավալների հնարավոր գնման վերաբերյալ) ֆոնին: Այդ բանակցությունները, որոնք ընթանում են 2015թ. սեպտեմբերից, քննադատության և դժգոհության ալիք են բարձրացրել ընդդիմադիր ուժերի, վրացական փորձագիտական հանրույթի և հասարակական կազմակերպությունների մի մասի շրջանում, որոնք մեղադրում են կառավարությանը Վրաստանի ազգային անվտանգության համար սպառնալիքներ ստեղծելու մեջ: Ադրբեջանի ղեկավարին այսքան հապճեպ հրավիրելը մատնանշում է, որ Բաքուն, չնայած իր արտաքուստ «հանգստությանը», այնուամենայնիվ, մտահոգ է պաշտոնական Թբիլիսիի՝ էներգամատակարարումների դիվերսիֆիկացմանն ուղղված գործողություններից:

Ասվածի հաստատումն է նաև այն, որ հունվարի 13-ին աշխատանքային այցով Թբիլիսի ժամանեց Ադրբեջանի նավթային պետական ընկերության (*SOCAR*) նախագահ Ռովնաղ Աբդուլաևը, որը հանդիպում ունեցավ Վրաստանի վարչապետ Գեորգի Կվիրիկաշվիլու հետ: Հանդիպմանը մասնակցում էին *SOCAR-Georgia*-ի ղեկավար Մահիր Մամեդովը, Վրաստանի փոխվարչապետ և էներգետիկայի նախարար Կախի Քալաձեն, էներգետիկայի փոխնախարար Մարիամ Վալիշվիլին:

«Ադրբեջանը Վրաստանի ռազմավարական գործընկերն է: Չնայած քաղաքական շահարկումներին, որոնք առկա են վերջին ժամանակներս, ուզում եմ ընդգծել, որ *SOCAR* ընկերության հետ ռազմավարական համագործակցությունը խիստ կարևոր է, և մենք պատրաստ ենք քննարկել ապագա համագործակցության խորացման հարցերը: Ադրբեջանը Վրաստանի բարեկամն է, և դա ամենագլխավորն է»,- ասել է Վրաստանի վարչապետը՝ ամփոփելով *SOCAR*-ի ղեկավարության հետ հանդիպման արդյունքները:

SOCAR նախագահն իր հերթին «կարևորել» է հանդիպումը Վրաստանի վարչապետի հետ: *SOCAR* վրացական ներկայացուցչության ղեկավար Մա-

հիր Մամեդովն ասել է, որ հանդիպման ժամանակ քննարկվել են նաև Վրաստանին գազամատակարարման տեխնիկական հնարավորությունները, մանավանդ ձմեռային ցուրտ շրջանում: Ըստ նրա՝ կողմերը համաձայնել են, որ երկու երկրների փորձագետներն այսուհետ ևս աշխատեն, իսկ ադրբեջանական կողմն առավելագույն չափով կավելացնի գազամատակարարման ծավալները, ընդհուպ օրական 7 մլն մ³:

Էներգետիկայի և բնական պաշարների նախարար Կախի Քալաձեի խոսքով՝ Վրաստանն ունի գազի հավելյալ ծավալների կարիք՝ բավարարելու համար վառելիքի աճող պահանջարկը: Ըստ նրա՝ Ադրբեջանից (որը բավարարում է Վրաստանի տարեկան սպառման մոտ 87%-ը) մատակարարումների ավելացումն անհնար է «տեխնիկական» պատճառներով, հատկապես ձմռանը, երբ գազի սպառումը Վրաստանում հասնում է գագաթնակետին: Իսկ *SOCAR* ընկերության մատակարարած գազի ծավալների ավելացման համար անհրաժեշտ կլինեն «հավելյալ ներդրումներ», մասնավորապես՝ կոմպրեսորային կայանի համար:

Նշենք, որ ըստ Վրաստանի գազի տեղափոխման ընկերության տվյալների՝ երկիրը գազ ստանում է ադրբեջանական երկու աղբյուրից: 2015թ. մոտ 750 մլն մ³ գազ երկիրն ստացել է ըստ այն համաձայնագրի, որը ձեռք է բերվել Հարավկովկասյան խողովակաշարի շրջանակում: Այդ խողովակաշարով իրականացվում է Վրաստանի տարածքով դեպի Թուրքիա գազամատակարարում Շահ-Դենիզ հանքավայրից: Բացի այդ, 2015թ. 1,35 մլրդ մ³ գազ ներկրվել է Վրաստան *SOCAR* ընկերության հետ առանձին համաձայնագրի շրջանակում:

Ինչ վերաբերում է Քալաձեի դիրքորոշմանը, ապա նա մինչ այդ վրացական լրատվամիջոցներին տված հարցազրույցներում արդեն քանիցս հայտարարել էր, թե Վրաստանին չի բավարարում գազի այն ծավալը, որն այսօր գալիս է Ադրբեջանից: Նա նշել է ռուսաստանյան «Գազպրոմ» ընկերության հետ բանակցությունների կարևորությունը, որի հետ վրացական կողմն առաջին տարին չէ, որ բանակցում է: «Ելնելով այն բանից, որ 2015թ., 2014-ի համեմատ, գազի սպառման պահանջարկն աճել է գրեթե 19%-ով, այս տարի Վրաստանը ստիպված կլինի 300-400 մլն մ³ պակասուրդը լրացնել ռուսական գազով»,- ասել է նա:

Վերադառնալով Դավոսին՝ նշենք, որ արդեն ՀՏՀ-ի «Եվրասիան և արդի Մետաքսի ճանապարհը» նստաշրջանում իր ելույթի շրջանակում Վրաստա-

նի վարչապետ Գեորգի Կվիրիկաշվիլին նշել է, որ Վրաստանը տարածաշրջանում դառնում է առավել բաց տնտեսությամբ երկիր՝ կարգավորման և էներգակիրների ու որակյալ աշխատուժի համեմատաբար ցածր սակագների ամենաազատական քաղաքականությամբ: Ըստ նրա՝ Վրաստանն ազատ առևտրի համաձայնագրեր ունի տարածաշրջանի բոլոր երկրների, Եվրամիության հետ և բանակցություններ է սկսել Չինաստանի հետ՝ միևնույն ժամանակ սերտորեն համագործակցելով «հարևանների»՝ Ղազախստանի ու Կենտրոնական Ասիայի երկրների հետ՝ մշակելու համար միասնական մոտեցում հարավկովկասյան միջանցքի կառավարման հարցում: Վրաստանի վարչապետը նաև ընդգծել է առաջին տարանցիկ գնացքի գործարկման «նշանակալիությունը», որը Չինաստանից ուղևորվել է Թուրքիա Ղազախստանի, Ադրբեջանի և Վրաստանի տարածքով: Ըստ Կվիրիկաշվիլու՝ Վրաստանը «փորձում է կապեր զարգացնել» Եվրամիության և տարածաշրջանի երկրների միջև և միևնույն ժամանակ «թուլացնել լարվածությունը» Ռուսաստանի հետ հարաբերություններում:

Վրաստան-Թուրքիա - Ենթակառուցվածքային նախագծերի հետ կապված՝ հարկ է նշել նաև այն պայմանավորվածության մասին, որը ձեռք է բերվել հունվարի վերջին Անկարայում, Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրիի և Թուրքիայի առևտրի և մաքսային հարցերի նախարար Բյուլենթ Թուֆեքչիի հանդիպման ընթացքում: Վրաստանը և Թուրքիան պայմանավորվել են 2016թ. մարտից սկսել իրականացնել *eTIR* եռամյա պիլոտային նախագիծ (երկու երկրների մաքսային վարչությունների տեղեկատվության էլեկտրոնային փոխանակում)՝ կապված միջազգային ճանապարհային փոխադրումների գործողությունների (*TIR*) հետ: Նախատեսվում է, որ Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու նախագիծն իրագործման պարագայում կդյուրինացնի երկու երկրների մաքսային վարչությունների միջև տեղեկատվության էլեկտրոնային փոխանակումը և մաքսային ընթացակարգերն այն բեռների համար, որոնք տեղափոխվում են *TIR* ցուցակով, ռիսկերի նախնական վերլուծության միջոցով:

Վերը նշված տեղեկատվության համատեքստում թուրքական *Haberler.com* պարբերականը տեղեկացրել է, որ ընդունվել է որոշում եռակողմ մեխանիզմի ստեղծման մասին՝ Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի մաքսային մարմինների մասնակցությամբ: Ըստ պարբերականի՝ այս մասին տեղե-

կացրել է Բյուլենթ Թուֆեքչին Վրաստանի ֆինանսների նախարարի հետ հանդիպման արդյունքներն ամփոփելիս։

Վրաստան-ԵՄ - Անցած հունվարը հետաքրքիր է եղել նաև Վրաստանի եվրոպական օրակարգի առումով։ Հունվարի 21-ին Ստրասբուրգում Եվրախորհրդարանն ընդունեց բանաձև ԵՄ-ի հետ Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի ասոցիացման համաձայնագրի իրագործման մասին։ Փաստաթղթի ընդունումից առաջ, նույն օրը տեղի ունեցած բանակռիվներում, հարևանության եվրոպական քաղաքականության հարցերով եվրահանձնակատար Յոհաննես Հանը Եվրախորհրդարանի անդամներին ասել է, որ Վրաստանը «տպավորիչ» առաջընթացի է հասել բարեփոխումների հարցում և «ավելի առաջ է գնացել», քան նախատեսված էր Վիզային ազատականացման գործողությունների պլանով (*VLAP*)։

Պաշտոնական Թբիլիսին, հանձին կառավարության ղեկավարի, ողջունել է այս փաստաթուղթը՝ գոհունակություն հայտնելով Վրաստանի եվրոպական ձգտումներին և վիզային ռեժիմի ազատականացման գործընթացին ԵՄ «ամուր» աջակցության առիթով։ Գեորգի Կվիրիկաշվիլին նաև հույս է հայտնել, որ ԵՄ-ը առաջիկայում վերջնական որոշում կկայացնի Վրաստանի քաղաքացիների համար անվիզա ռեժիմ մտցնելու վերաբերյալ։ «Դա շոշափելի օգուտ կբերի Վրաստանի քաղաքացիներին, ինչպես նաև ավելի մեծ հնարավորություններ կընձեռի բիզնես-հանրությանը, մանավանդ փոքր ու միջին ձեռներեցությանը՝ ստանալու առավելագույն օգուտ ԵՄ-ի հետ ազատ առևտրից»,- ասել է նա։

Վրաստան-Ռուսաստան - 2015թ. դեկտեմբերի վերջը վրաց-ռուսական հարաբերություններում դրական է եղել և նշանավորվել է Վրաստանի քաղաքացիների համար ցանկացած ժամկետներով վիզաների ազատականացմամբ կամ գործնական, աշխատանքային և ուսումնական վիզաներ ստանալու ընթացակարգի պարզեցման առումով։ 2016թ. հունվարը, սակայն, կարելի է համարել բարդ հարևան երկու երկրների փոխհարաբերություններում։

Ամսվա վերջին՝ հունվարի 25-ին, Վրաստանի վարչապետի՝ ՌԴ-ի հետ փոխհարաբերությունների կարգավորման հարցերով հատուկ ներկայացուցիչ Զուրաբ Աբաշիձեն վրաց լրագրողներին ասել է, որ 2016թ. կեսերին չի բացառվում Վրաստանի քաղաքացիների համար Ռուսաստանի հետ վիզային ռեժիմը լիովին հանելու հավանականությունը։ Սակայն արդեն հաջորդ օրը՝

հունվարի 26-ին, Մոսկվայում մամուլի ասուլիսի ընթացքում ՌԴ ԱԳՆ ղեկավար Սերգեյ Լավրովն ասել է, որ պաշտոնական Մոսկվան պատրաստ է հետագայում անվիզա ռեժիմ մտցնել՝ հավելելով, որ դա «տարօրինակ կլինի մի շրջանում, երբ մենք (Վրաստանը և Ռուսաստանը) դիվանագիտական հարաբերություններ չունեն, որոնք մենք չէ, որ խզել ենք»: Այս հայտարարությամբ շեշտադրվել է այն, որ Մոսկվան դեմ չէ անվիզա ռեժիմ մտցնել Թբիլիսիի հետ, բայց անհրաժեշտ է վերականգնել դիվանագիտական հարաբերությունները, որոնք խզվել են Վրաստանի կողմից 2008թ.: Վրացական կառավարության համար այս քայլը կնշանակեր ընդունել գոյություն ունեցող իրողությունները և անկախ Աբխազիայի ու Հարավային Օսիայի առկայությունը, ինչին, մեր կարծիքով, պաշտոնական Թբիլիսին չի գնա:

Ռուսաստանի ԱԳՆ ղեկավարի մյուս հայտարարությունն այն մասին, թե Ռուսաստանի և Վրաստանի փոխհարաբերությունները դուրս են գալիս «խոր սառեցման» վիճակից, այնուամենայնիվ, ուղեկցվել է դիվանագիտական հարաբերություններ հաստատելու անհրաժեշտության մասին արտահայտությամբ: Իր մեկ այլ հայտարարությամբ (Վրաստանի Պանկիսի կիրճում ահաբեկչական սպառնալիքի առկայության մասին, և որ ԴԱԻՇ ահաբեկչական խմբավորումն այն օգտագործում է իր մարզումների համար) նա հանկարծակիի է բերել վրացական կառավարությանը և քննադատության ալիք առաջացրել ինչպես երկրի իշխանական, այնպես էլ ընդդիմադիր ուժերի կողմից:

«Տեղեկություններ են հասնում, թե ԻԼԻՊ-ականներն այդ դժվարամատչելի տարածքն օգտագործում են այն բանի համար, որպեսզի այնտեղ մարզվեն, հանգստանան և լրացնեն իրենց պաշարները»,- նշել է ՌԴ ԱԳՆ ղեկավարը և ավելացրել, որ Մոսկվան ժամանակին ստիպված է եղել խստացնել վիզային ռեժիմը Թբիլիսիի հետ «հիմնականում այն պատճառով, որ չի վերացել Պանկիսի կիրճից սպասվող ահաբեկչական սպառնալիքը»:

Մեկնաբանելով Ռուսաստանի արտգործնախարարի հայտարարությունը՝ երկրի վարչապետ Գեորգի Կվիրիկաշվիլին նշել է, որ Վրաստանի իշխանությունները վերահսկում են իրավիճակը Պանկիսի կիրճում: «Վրաստանի կառավարությունն իրականացնում է լիակատար վերահսկողություն, Պանկիսի կիրճից ահաբեկչական սպառնալիքի ոչ մի ռիսկ չկա... Այնտեղից հեռացել է մի քանի տասնյակ մարդ, որպեսզի կռվի «Իսլամական պետության» շարքերում, բայց նրանց մուտքի վրա խիստ հսկողություն է սահման-

ված, և, իհարկե, այստեղ գործում են Քրեական օրենսգրքի հոդվածները»,- ասել է Կվիրիկաշվիլին։

Վարչապետին իր համերաշխությունն է հայտնել նաև Ռուսաստանի հետ փոխհարաբերությունների կարգավորման գծով Վրաստանի վարչապետի հատուկ ներկայացուցիչ Զուրաբ Աբաշիձեն։ Ըստ նրա՝ Պանկիսի կիրճից Սիրիա է գնացել և «Իսլամական պետությանը» հարել մոտ 30 մարդ, և նրանց վերադարձի դեպքում երկրի օրենսդրության հիման վրա նրանց հանդեպ քրեական գործ կհարուցվի։ Աբաշիձեն նաև հիշեցրել է ՌԴ ԱԳՆ ղեկավարին, որ Վրաստանն ակտիվ մասնակցություն ունի ահաբեկչության դեմ ուղղված միջազգային ջանքերին։

Անդրադառնալով Վրաստանից ԴԱԻՇ շարքերում կռվողների խնդրին՝ նշենք, որ համաձայն Վրաստանի ՆԳՆ՝ 2015թ. հակաահաբեկչական գործունեության վերաբերյալ հաշվետվության՝ երկրի քննչական մարմինները հարուցել են 14 գործ ահաբեկչության մասին։ Այսօր Վրաստանում արդեն կալանված է 9 մարդ՝ ԴԱԻՇ ահաբեկչական կազմակերպության հետ կապեր ունենալու մեղադրանքով։ Վերջին տարիներին զոհվել է կազմակերպության շարքերում կռվող 15 վրաստանցի՝ Պանկիսի կիրճի 14 բնակիչ և մեկ հոգի Աջարիայից։ Վրաստանի պետանվտանգության ծառայության ղեկավարի տեղակալ Լևան Իզորիան ավելի վաղ նշել էր, որ իր գերատեսչությունը տեղեկություն ունի Սիրիայում, ահաբեկչական կազմակերպությունների շարքերում երկրի մոտ 50 քաղաքացու գտնվելու մասին։ Ամենահայտնի վրաստանցին Թարխան Բաթիրաշվիլին է կամ Աբու Ումար ալ-Շիշանին։

ԱԴՐԲԵՋԱՆԻ
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
2016թ. հունվար

Անուշավան Բարսեղյան*

Ադրբեջանի արտաքին քաղաքատնտեսական զարգացումները ս.թ հունվարին հիմնականում ընթացել են ավանդական գործընկերների հետ հարաբերությունների տիրույթում:

ԱՀ արտաքին քաղաքական առաջնահերթությունների մասին ադրբեջանական հանրության պատկերացումներն արտացոլված են վերջերս արված սոցիոլոգիական հարցումների արդյունքներում, որոնց համաձայն՝ Ադրբեջանի դաշնակիցներ են համարվում Թուրքիան, Պակիստանը, Վրաստանը, ԱՄՆ-ը և Սաուդյան Արաբիան: Հարցման մասնակիցները կարծում են, թե Լեռնային Ղարաբաղի համար հնարավոր պատերազմի դեպքում Ադրբեջանին օգնության կգան Թուրքիան (82%), Պակիստանը (10%) և Սաուդյան Արաբիան (8%), իսկ ինտեգրացիոն հիմնական ուղղությունների նկատմամբ հանրային համակրանքն ունի հետևյալ պատկերը. ՆԱՏՕ, ԵՄ՝ 72%, ԵՏՄ՝ 16%:

Ադրբեջան-Թուրքիա - ԱՀ կառավարության նիստում Ի.Ալիևն անդրադարձել է ռուս-թուրքական լարվածության հետևանքով թուրքական բեռնափոխադրումների համար ստեղծված դժվարությունները հաղթահարելու Ադրբեջանի ջանքերին, որոնք տվել են իրենց արդյունքները: Սակագների իջեցման և այլ պայմանների բարելավման միջոցով Ադրբեջանը միաժամանակ ձեռք է մեկնում Թուրքիային և ստանում լրացուցիչ քաղաքատնտեսական շահաբաժիններ:

Հայտնի է որ, Թուրքիան որոշակի ակնկալիքներ ուներ նաև Ադրբեջանից ներկրվող գազի ծավալների աճի ուղղությամբ, սակայն, ինչպես պարզվում է, ներկայումս դժվարություններ կան անգամ նախկին մատակարարումներն անխափան ապահովելու առումով[1]: Թուրքիայի հաշվիչ պալատի

---

* «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի փորձագետ-խորհրդական:

[1] Երկու երկրների միջև կնքված պայմանագրի համաձայն՝ Թուրքիան պարտավոր է Ադրբեջանից տարեկան 6,6 մլրդ մ^3 գազ գնել:

տարածած հաղորդագրության համաձայն, Ադրբեջանը *«BOTAŞ»* թուրքական գազային օպերատորին պարտք է $322մլն-ի գազ: Նշված ընկերությունն իրականացնում է գազի ներկրումն Ադրբեջանից և Իրանից՝ «գնիր կամ վճարիր» սկզբունքով, նախապես վճարելով գազի ծավալների դիմաց: Հետաքրքրական է այն փաստը, որ իրանական գազի տեղափոխման հետ կապված խնդիրներին (հասկանալի պատճառներով) ավելացել են նաև ադրբեջանական գազի տեղափոխման չպատճառաբանված դժվարությունները:

Երկու երկրների բարձրաստիճան պաշտոնյաների հանդիպումների ընթացքում մշտապես քննարկվում են երկուստեք ներդրումների ավելացման անհրաժեշտությունը և պատրաստակամությունը: Եվ այս համատեքստում ուշագրավ է Թուրքիայի Թեքիրդաղի շրջանում նավթային հետախուզական աշխատանքներ իրականացնելու *«Socar Petrol Arama ve Üretim A.Ş.»* ընկերության (*SOCAR*-ի դուստր ձեռնարկություն) հայտի մերժումն Անկարայի կողմից: Փոխարենը, նշված շրջանում նավթի և գազի հետախուզման աշխատանքներ կիրականացնի Թուրքիայի նավթագազային գործակալությունը:

Ադրբեջան-Պակիստան - Ամիսն ուշագրավ էր Պակիստանի հետ հարաբերությունների ակտիվության առումով: Դավոսի տնտեսական գագաթաժողովի շրջանակներում Ի.Ալիևը հանդիպել է Պակիստանի վարչապետ Ն.Շարիֆի հետ: Բաքվում գտնվող Պակիստանի ռազմածովային ուժերի հրամանատար Մ.Զակաուլլախին ընդունել են նախագահ Ի.Ալիևը և պաշտպանության նախարար Զ.Հասանովը: Նշվել է քաղաքական հարաբերությունների բարձր մակարդակի, բոլոր ոլորտներում համագործակցության ընդլայնման անհրաժեշտության, ռազմական խորացող համագործակցության և ԼՂ հակամարտության հարցում Ադրբեջանին սատարելու Պակիստանի պատրաստակամության մասին: Քննարկվել են ռազմատեխնիկական, զինվորական կրթության, համատեղ զորավարժությունների և ահաբեկչության դեմ պայքարի հետ կապված հարցեր:

Հարկ է նշել, որ մեկ ամիս առաջ Բաքվում էր գտնվում Պակիստանի նախագահ Մ.Հուսեյնը, որը հայտարարել էր Պակիստանից *JF-17 Thunder* կործանիչներ գնելու Ադրբեջանի ցանկության մասին: Վերջինիս խնդրանքով

Ի.Ալիևը թույլատրել է Ադրբեջանում Պակիստանի Ազգային բանկի մասնաճյուղ բացել $10 մլն կապիտալով[2]:

Ադրբեջան-Վրաստան - Ադրբեջանի և Վրաստանի փոխհարաբերություններում էական տեղ են զբաղեցնում էներգակիրներին առնչվող հարցերը, որոնք օրակարգային են դարձել հատկապես վերջին ամիսներին՝ Վրաստանի գազային քաղաքականության նոր դրսևորումների պատճառով: Պաշտոնական Թբիլիսին ցանկանում է, բացի ադրբեջանականից, ներկրել նաև իրանական, ռուսական գազ, և դա պատճառաբանում է հիմնականում Ադրբեջանից ներկրվող կոմերցիոն գազի բարձր գնով[3] և այն հանգամանքով, որ Վրաստանի 2016թ. գազի դիֆիցիտը *SOCAR*-ն ի վիճակի չէ փակել[4]:

Այս հարցի շուրջ ռուսական կողմի հետ ընթացող բանակցությունները բախվել են որոշակի տարաձայնությունների[5], իսկ Իրանի հետ քննարկվում է Հայաստանի տարածքով Վրաստան արտահանվող օրական 8.5-14.1մլն մ^3 գազի ծավալների հարցը[6]:

Ռուսական և իրանական գազի մուտքը Վրաստան, ըստ *«SOCAR Energy Georgia»*-ի տնօրեն Մ.Մամեդովի, չի ազդի Վրաստան առաքվող ադրբեջանական գազի ծավալների վրա: Թբիլիսիի և Բաքվի միջև կնքված պայմանագրի համաձայն՝ մինչ 2025թ. Ադրբեջանը գազով կապահովի Վրաստանի ամբողջ սոցիալական հատվածը: Մ.Մամեդովը չի բացառել նաև Շահ Դենիզ-1 հանքավայրից Վրաստան արտահանվող գազի ծավալների աճը մինչև 7 մլն մ^3, ինչպես նաև ձմռանն առաջացող պիկային պահանջարկի բավարարումը: Նա «զգուշացրել» է նաև, որ Իրանից Հայաստանի տարածքով գազ ստանալու դեպքում Վրաստանը ֆինանսական պարտավորություններ կունենա «Գազպրոմի» առաջ, քանի որ Հայաստանով անցնող գազատարը պատկանում է «Գազպրոմին»:

[2] Ադրբեջանում պահանջվում է նվազագույնը $50 մլն նախնական կապիտալի առկայություն բանկերի գրանցման թույլտվություն ստանալու համար:

[3] Ըստ Վրաստանի փոխվարչապետ, էներգետիկայի նախարար Կ.Քալաձեի՝ Մոսկվան ավելի էժան գազ է առաջարկում Վրաստանին, քան ներկայումս այն գնում է Ադրբեջանից: Միաժամանակ, *SOCAR*-ի հետ աշխատանքներ են տարվում կոմերցիոն գազի նոր սակագնային պլան կազմելու ուղղությամբ:

[4] Այս մասին *SOCAR* նախագահի հետ հանդիպումից հետո հայտարարել է Կ.Քալաձեն:

[5] Կողմերը տարաձայնություններ ունեն Վրաստանի տարածքով Հայաստան արտահանվող գազի տարանցման դիմաց կատարվելիք վճարումների հարցում: Հունվարին Վիեննայում Կ.Քալաձեի և «Գազպրոմի» ներկայացուցիչների միջև կայացած հանդիպումն անարդյունք է եղել:

[6] Վրաստանի էլեկտրակայանների համար նախատեսվող գազն արտահանվելու է հետևյալ սխեմայով. Իրանը Հայաստանի սահմանին կհասցնի անհրաժեշտ ծավալի գազը, իսկ Վրաստանն այն կստանա հայ-վրացական սահմանին:

SOCAR-ը Վրաստանի տնտեսական կյանքում ունեցած ներգրավվածության[7] միջոցով ազդեցության լծակներ է ձեռք բերել վրացական որոշ լրատվամիջոցների նկատմամբ, որոնք ամեն կերպ փորձում են խեղաթյուրել էներգակիրների դիվերսիֆիկացմանն ուղղված քաղաքականությունը՝ հաճախ զերծ չմնալով հակառուսական և հակահայկական հրապարակումներից:

Քաղաքական ընդդիմադիր շրջանակները նույնպես բացասականորեն են տրամադրված ռուսական կամ իրանական գազի գնման հնարավոր գործարքների նկատմամբ: «Ազատ դեմոկրատներ» կուսակցության առաջնորդներից Ա.Պետրիաշվիլին կասկած է հայտնել, որ «Գազպրոմի» հետ վարվող բանակցությունները կոչված են ծառայելու ոչ թե ազգային, այլ մասնավոր շահերին և լուրջ սպառնալիք են երկրի էներգետիկ անկախությանը, իսկ «Միացյալ ազգային շարժում» կուսակցության անդամ Նուգզար Ցիկրաուլին ներկայացրել է իրենց ավանդական դիրքորոշումն առ այն, որ Ադրբեջանը Վրաստանի ռազմավարական գործընկերն է և ընթացող բանակցությունները կարող են վնասել վերջինիս շահերին:

Ադրբեջան-Եվրոպա - ԵԽ գլխավոր քարտուղար Թ.Յագլանդը ԵԽԽՎ-ին ուղղված կոչում խիստ քննադատության է ենթարկել Ադրբեջանին Եվրոպական դատարանի որոշումներն արհամարհելու համար: Վերջինս կոպտագույն խախտում է որակել քաղբանտարկյալ Իլգար Մամեդովին անազատության մեջ պահելը, երբ վերջինիս ձերբակալությունը Եվրոպական դատարանի կողմից ճանաչվել է քաղաքական շարժառիթներով իրականացված: Թ.Յագլանդը հայտարարել է, որ ստիպված է առաջին անգամ կիրառել հատուկ կոնվենցիան և Ադրբեջան գործուղել հատուկ առաքելություն՝ Ի.Մամեդովի ազատությանը հասնելու նպատակով:

Լրացուցիչ պաշտոնական ստուգումներ են մտցվել 2016թ. ընթացքում Ադրբեջանից ներկրվող օրգանական արտադրանքի վրա: Ադրբեջանից բացի, ցուցակում հայտնվել են նաև Ուկրաինան, Բելառուսը, Ղազախստանը, Վրաստանը, Ղրղզստանը, Մոլդովան, Տաջիկստանը, Ուզբեկստանը և Ռուսաստանը:

[7] *«SOCAR Energy Georgia»-ն* (*SOCAR*-ի դուստր ձեռնարկություն) Վրաստանում կառուցել է 5150 կմ գազատար և գազով ապահովում է 207 հազ. 989 բաժանորդի:

Առևտրատնտեսական հարաբերությունները ԵՄ-ի հետ նույնպես անկումային շրջան են ապրում, 2015թ. ընթացքում, անցած տարվա համեմատ, ապրանքաշրջանառությունը կրճատվել է 33,9%-ով՝ կազմելով $9695 մլն: Արտահանումը կրճատվել է 41,63%-ով՝ կազմելով $6752 մլն, ներկրումը՝ 5,18%-ով, կազմելով $2943 մլն: Հաշվետու ժամանակահատվածում ԵՄ-ին բաժին է ընկել ամբողջ արտահանման 59,1%-ը և ներկրման 31,92%-ը:

Ակնհայտ է, որ մարդու իրավունքների ոտնահարումները և նավթի գների հետևանքով առաջացած տնտեսական ճգնաժամն իրենց բացասական ազդեցություն են թողնում ԵՄ-ի հետ Ադրբեջանի հարաբերությունների վրա:

ՄՈԼԴՈՎԱՆ ՃԱՄՓԱԲԱԺԱՆԻՆ. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ, ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ԵՎ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Վալենտին Մեգուրու-Զայցև՝

Միավորված Ազգերի Կազմակերպության 70-ամյա հոբելյանի (2015), մարդկության ոխերիմ թշնամու՝ ԻԼԻՊ-ի (արաբերեն՝ ԴԱԻՇ) դեմ համատեղ պայքարի մասին բանավեճերի ֆոնին Մոլդովայի և Մերձդնեստրի թեման, առաջին հայացքից, էական չի թվում։

Սակայն Ուկրաինայի արևելքում քաղաքացիական պատերազմից, Սիրիայից դեպի Միջին Ասիա ԻՊ էքսպանսիայից և նեոխալիֆայության դեմ միջազգային պատերազմում ռուսական օդատիեզերական ուժերի մասնակցությունից, ինչպես նաև Թուրքիայի Հանրապետության հետ ՌԴ կոնֆլիկտից հետո Մոլդովայի Հանրապետությունը (ՄՀ) Ռուսաստանի համար կարող է դառնալ հերթական՝ նշանակությամբ երրորդ կամ չորրորդ կոնֆլիկտածին ռազմական գործողությունների թատերաբեմը (ՌԳԹ)։

Պատերազմը Մոլդովայում ընթանում է անցյալ հարյուրամյակի 90-ականների սկզբից։ Այսօրվա խնդիրն է իրադարձությունների կրկնության կանխումը։ ՄՀ-ի շուրջ միախառնվել են ինչպես Ռումինիայի (հետևաբար՝ նաև Եվրամիության), այնպես էլ Ռուսաստանի հակասական շահերը։

Ուկրաինան ևս անտարբեր չէ խնդրի հանդեպ. մոլդավական տարածքներ, որոնք այսօր ներկայանում են որպես Չեռնովիցկի մարզ (ՄՀ-ից հյուսիս) և Օդեսայի մարզի արևմտյան մասը, այսինքն՝ Բուջակ տափաստանային երկրամասի հարավը, որտեղ ապրում են ուղղափառ թյուրքերը՝ գագաուզները։ Բայց այս ամենը տեղի է ունեցել դեռևս խորհրդային տարիներին, Հայրենական մեծ պատերազմից հետո, երբ Բուջակի հարավային մասի կցումը Ուկրաինական ԽՍՀ Օդեսայի մարզին հանգեցրեց այն բանին, որ Մոլդավական ԽՍՀ-ն, հետևաբար և ներկայիս ՄՀ-ն ու, մասնավորապես, Մերձդնեստ-

---

՝ Անկախ քաղաքագետ։

ը կորցրին ելքը դեպի ծով։ Իսկ դա ուղղակի սպառնալիք է Մերձդնեստրի Մոլդավական Հանրապետության համար։

ՄՀ ապագայի սցենարների տարբերակները բազմաթիվ են. Եվրամիության և Ռուսաստանի Դաշնության միջև հավասարակշռության ներկայիս կարգավիճակ; երկու, նույնիսկ երեք անկախ մասերի բաժանում՝ համեմատաբար խոշոր Բեսարաբիա (կամ Մոլդովա՝ *Moldova*)՝ Քիշնև մայրաքաղաքով, Մերձդնեստր՝ Տիրասպոլ մայրաքաղաքով և Գագաուզիա՝ Կոմրատե մայրաքաղաքով; ԵՄ-ին աստիճանական անդամակցություն՝ կոնկրետ «ճանապարհային քարտեզով»։ Հնարավոր է նաև Բեսարաբիայի վերամիավորումը Ռումինիային՝ Մերձդնեստրի և Գագաուզիայի անջատմամբ, որոնք, Հարավային Օսիայի կամ Աբխազիայի նման, խնդրանքով կդիմեն ընդունել իրենց Եվրամիություն կամ ՌԴ։

Հիմա իրավիճակը պատային է։ Դիմակայող ուժերից և ոչ մեկը՝ եվրոպամետ, թե ռուսամետ, վստահ չէ իր ուժերին այն չափով, որ կարողանա պահանջել համաժողովրդական հանրաքվե, օրինակ՝ Ռումինիայի հետ միավորվելու համար։ Թեև վերջին դեպքում ամեն բան չէ, որ այդքան միանշանակ է. մոլդավացիների մեծամասնությունը հանդես է գալիս հօգուտ ՄՀ անկախության։ Ինչպես ավստրիացիները, որոնք երբեք չեն ցանկացել միավորվել Գերմանիային։ Պատահական չէ, որ 1938թ. Ավստրիայի բռնի միակցումը նացիստական Գերմանիային՝ հակառակ ալպյան հանրապետության բնակչության մեծամասնության կամքին, պատմության մեջ բացասական երանգավորում է ստացել՝ «անշլյուս» անվանվելով։

Եթե խոսելու լինենք Երկրորդ համաշխարհայինի մասին, ապա ՄՀ-ում կան քաղաքացիներ, ովքեր կարծում են, թե պատերազմի ժամանակ պաշտոնական Բուխարեստն իրեն միշտ չէ, որ կոռեկտ է պահել բեսարաբ եղբայրակիցների հանդեպ ուժային վերամիավորումից հետո, որն իրականացվել է մարշալ Իոան Անտոնեսկուի գլխավորությամբ։ Այսօրվա Ռումինիայում մարդիկ այդ մասին նույնիսկ չգիտեն էլ։ Մահապատժի ենթարկված առաջնորդին (ռումիներեն՝ *conducatorul*) հերոսացնող բավականաչափ հրապարակումներ կան, որոնց հեղինակները մարշալին ներկայացնում են որպես հերոս, որն իրականացրել է Պրուտ գետի երկու ափերին բնակվող ռումինացիների միավորման դարավոր երազանքը։

Մոլդավ հասարակությունն այսօր պառակտված է աշխարհաքաղաքական և ազգային հողի վրա, թեև բոլորն էլ ուղղափառներ են: Ռուսաստանին մերձենալու օգտին հանդես են գալիս տեղի ռուսալեզու բնակիչները, իսկ ռումինալեզու բնակիչները՝ հիմնականում քաղաքաբնակներ, կողմ են ԵՄ-ին մերձենալուն կամ Ռումինիային վերամիավորվելուն:

Իրավիճակն առայժմ անկայուն է: Բայց ժամանակի ընթացքում գերազանցություն կստանան ռումինամետ-եվրոպամետ քաղաքացիները, և առաջին հերթին՝ ի հաշիվ երիտասարդ սերնդի, որի մեծ մասը սովորում է Ռումինիայում կամ իր հայրենիքում, բայց ռումինական դրամաշնորհներով: Դա նորմալ է, քանի որ դա է «արյան կանչը»: Եվ ռուսաստանյան լրատվամիջոցները, մանավանդ պետականները, չպետք է վախեցնեն «ռումինացմամբ»՝ որպես մի ինչ-որ կործանարար հիվանդություն: Ճիշտ չէ, անարդար է և ոչ պրագմատիկ ժխտելը, որ մոլդավերենը հենց նույն ռումիներենը չէ:

Հարկ է գտնել միջանկյալ տարբերակ, անգամ ի հաշիվ ՄՀ բաժանման, որպեսզի բավարարվեն երեք էթնիկ խմբերի հավակնություններն՝ առանց նոր քաղաքացիական պատերազմի: Իսկ Մոլդովայի բնակիչներին պետք է հնարավորություն ընձեռվի՝ ինքնուրույն որոշելու իրենց ճակատագիրը հանրաքվեի միջոցով: Հանրաքվեն պետք է հաշվի առնի երեք շրջանների՝ Բեսարաբիայի, Մերձդնեստրի և Գագաուզիայի կարծիքը:

Ռուսաստանը պետք է ավելի ճկուն քաղաքականություն վարի ՄՀ-ի հանդեպ: Ցանկալի է, որպեսզի բարձրագույն քաղաքական մակարդակով բացահայտ խոսվի ՄՀ քաղաքացիների՝ իրենց ճակատագիրն ինքնուրույն որոշելու իրավունքի մասին: Դա, հաստատ, կսառեցնի «տաքգլուխների» գոնե մի մասին, որոնք պահանջում են վերամիավորում Ռումինիային՝ «այստեղ և հիմա» սկզբունքով:

Մոլդովայի Հանրապետությունը դեպի Սև ծով նորմալ ելք չունի: Այն սեղմված է Ռումինիայի և Ուկրաինայի միջև: Բայց կա դեպի ծով տանող երկու «սողանցք»: Խոսքը երկու ծայրամասերի մասին է՝ հարավ-արևմուտքում և հարավ-արևելքում:

Հարավ-արևմուտքում ելքը դեպի ծով հնարավոր է Դունայով. ՄՀ-ն գետի հետ ամենակարճ շփումն ունի (մոտ 0,5 կմ ձախ ափին) գետի հունի կտրուկ շրջադարձի մոտ: Դա այն տեղն է, որտեղ Դունային միանում է Պրուտը՝ ձևավորելով Ռումինիայի հետ ամբողջ արևմտյան սահմանը: Հարավ-

արևմտյան այս ծայրամասում է գտնվում ՄՀ Կահուլի շրջանի (*Cahul*) Ջուրջուլեշտի գյուղը (*Giurgiulesti*), որը Մոլդովայի միակ նավահանգիստն է Դունայի վրա՝ դեպի Սև ծով ելքով: Ջուրջունեշտի միջազգային ազատ նավահանգիստն ունի ազատ տնտեսական գոտու կարգավիճակ: Այնուհետև Դունայը և նրա հյուսիսային Կիլիա գետաբազուկը (*Chilia,* հսկայական դելտայի երեք բազուկներից մեկն է), որը հիմնականում հոսում է Ռումինիայով, ձևավորում է նաև ռումինա-ուկրաինական երկար սահմանն ընդհուպ մինչև Սև ծով:

«Ռոսսոտրուդնիչեստվո»-ի նախկին փոխնախագահ (ներկայում՝ Ղրիմի Հանրապետության Նախարարների խորհրդի փոխնախագահ) Գեորգի Մուրադովի տվյալներով՝ ռումինական կողմից Դունայի գետաբերանի ռումինական կողմում ապրում է 250 հազար ռուս հնադավան: Նրանք ռումինական պետության օրինապաշտ քաղաքացիներ են, բայց սրբորեն պահպանում են իրենց ավանդույթներն ու հավատարիմ են իրենց ծագումնաբանական և պատմական հիշողությանը:

Մոլդովայի հարավ-արևելքում ելքը դեպի ծով հնարավոր է Դնեստրի գետաբերանով: Բայց դա Ուկրաինայի տարածքն է: ՄՀ հարավարևելյան ծայրամասում, Դնեստր գետի վրա է գտնվում Շտեֆան-Վոդայի շրջանի (*Stefan-Voda*) Պալանկա գյուղը (*Palanca*): Այդ գյուղի միջով է անցնում Օդեսայի մարզի հարավարևմտյան մասից դեպի նրա հյուսիսարևելյան մաս տանող ավտոճանապարհը: Այստեղ է գտնվում Ուկրաինայի այդ մարզի երկու մասերն իրար կապող նեղ ուղին: Այդ երկու մասերը միմյանցից բաժանված են Դնեստրի գետաբերանով: Դրանից դեպի արևմուտք և ընդհուպ մինչև Պրուտ-Դունայ-Կիլիա գետաբազուկ ընկած են Բեսարաբիայի հարավի Բուջակի տափաստանները, որոնք պատերազմից հետո տրվեցին ոչ թե Մոլդավական, այլ Ուկրաինական ԽՍՀ-ին:

Ի դեպ, Դնեստրի գետաբերանի արևմտյան ափին (նախկին Իզմայիլյան մարզի կողմից) է գտնվում Դնեստրի Բելգորոդ քաղաքը, որն ավելի վաղ կրում էր թուրքերեն Աքերման անունը: Մոլդավիայում և Ռումինիայում այն անվանում են Չետատեա Ալբե (*Cetatea Alba*), այսինքն՝ Սպիտակ ամրոց: Ռումիներեն անվանման առկայության փաստը խոսում է այն մասին, որ այդ քաղաքը, հետևաբար և Դնեստրի գետաբերանից արևմուտք գտնվող ամբողջ տարածքը (ներկայիս Օդեսայի մարզի հարավ-արևմուտքը) մտել են միջնադարյան Մոլդավական պետության կազմի մեջ:

Պալանկա գյուղի ավտոխճուղու այս հատվածը Ուկրաինան անցած դարի 90-ական թթ. փոխանակել է Մոլդովայի հետ՝ տալով Դունայի վերը նշված կես կիլոմետրանոց ձախափնյակը, որը մինչ այդ պատկանում էր Ուկրաինային, և որտեղ հիմա Դունայով անցնում է Ռումինիայի հետ ՄՀ սահմանը: Այսինքն՝ Մոլդավական ԽՍՀ-ն դեպի Դունայ և, հետևաբար՝ դեպի Սև ծով միջազգային նավարկուղով անմիջական ելք չուներ: Բայց դա խնդիր չէր խորհրդային իրականության պայմաններում, երբ սահմանները հանրապետությունների միջև ընդամենը վարչական բնույթ էին կրում: Անկախության պայմաններում տարածքային այս փոխանակումը, անշուշտ, փոխշահավետ է:

Պատերազմից հետո, Մոլդավական ԽՍՀ կազմավորման ժամանակ, Բեսարաբիայի հարավը՝ Բուջակը, հանձնվեց Ուկրաինային, ինչը մեր օրերում ճակատագրական հետևանքներ կարող է ունենալ Մոլդովայի Հանրապետության համար, քանի որ էթնոլեզվական, մշակութային, քաղաքական և տնտեսական խնդիրներից բզկտվող և, միևնույն ժամանակ, դեպի ծով նորմալ ելք չունեցող երկիրը հազիվ թե կենսունակ գտնվի որպես ինքնիշխան պետություն իր ներկայիս սահմաններում:

Խորհրդային ղեկավարությունը ձևականորեն էր օգտագործում էթնիկական վիճակագրությունը: Մոլդավիայի ինը շրջաններից երեքում մեծամասնություն էին կազմում ուկրաինացիները, ռուսները, բուլղարները. դրանք հանձնվեցին Ուկրաինային: Իսկ դա հենց Բեսարաբիայի հարավն էր: Մյուս վեց շրջաններում մեծամասնությունը մոլդավացիներ և գագաուզներ էին. դրանցից էլ 1940թ. կազմավորվեց Մոլդավական ԽՍՀ-ն, որին ավելացրին Մոլդավական ԻԽՍՀ-ն, որն ինքնավարություն էր Ուկրաինական ԽՍՀ կազմում և ստեղծվել էր դեռևս 1924թ.: Այժմ դա Մերձդնեստրն է:

Պատմական Մոլդովան՝ Կարպատներից մինչև Դնեստր, իր կազմում միշտ ունեցել է Բուջակի տափաստանները: Դնեստրի հետևում գտնվող տարածքները, ռուսերեն՝ Մերձդնեստր, իսկ ռումիներեն՝ Անդրդնեստր (լատիներեն՝ *Transnistria,* Տրանսիլվանիայի/*Transilvania* պես՝ Անդրանտառներ) դրվագաբար են պատկանել Մոլդովային, բայց դեպի ծով ելքը Դունայի Կիլիա գետաբազուկի և Դնեստրի միջև միշտ եղել է:

2015թ. ընթացքում և 2016թ. սկզբի դրությամբ, երբ Քիշնևը ցնցեցին անընդմեջ հանրահավաքները՝ մայրաքաղաքի կենտրոնում մշտական վրանաբնակներով (երկու հակառակ քաղաքական ճամբարներից՝ եվրոպամետ

«Արդարություն և ճշմարտություն» [*Dreptate si adevar, DA*]) շարժումը և ռուսամետ [Իգոր Դոդոնի Սոցիալիստների կուսակցությունը և Ռենատո Ուսատու «Մեր կուսակցությունը»], երբ պետբյուջեից կատարվեց «դարի գողությունը» մեկ միլիարդ դոլարի չափով, ինչը հավասար էր բյուջեի 16%-ին, երբ դժգոհ են ինչպես աջ «եվրոպամետները», այնպես էլ ձախ «ռուսամետները», միանգամայն հնարավոր է արտահերթ ընտրությունների նշանակում 2016թ. գարնանը: Եվ կարելի է ենթադրել, թե ընտրություններում կարող են հաղթել «ռուսամետ» ուժերը՝ հանձին Սոցիալիստների կուսակցության և «Մեր կուսակցության»:

Քանի որ Մոլդովայում չեն կարողանում հստակ նշել իրենց ռուս, թե ռումինացի ինքնությունը, մնում է ասել միակ և վաղուց հայտնի խոսքը՝ «а Иван – молдаван» (իսկ Իվանը մոլդավացի է): Այսինքն՝ սա մի ինչ-որ սիմբիոզ է, որն առաջ է եկել Ռուսաստանի կազմում Բեսարաբիայի երկհարյուրամյա (1812 թվականից) գտնվելով պայմանավորված, այն ժամանակներից, երբ Մ.Ի. Կուտուզովը 1812թ. մայիսի 16-ին (28-ին) ստորագրեց Բուխարեստի պայմանագիրը, որով Պրուտի և Դնեստրի միջագետքը ռուս-թուրքական հերթական պատերազմի արդյունքում Օսմանյան կայսրությունից անցավ Ռուսական կայսրությանը: Այդ ժամանակ արդեն վաղուց չկար մոլդավական անկախ պետությունը և դեռևս չկար Ռումինիայի պետությունը, որն ստեղծվեց, ինչպես հայտնի է, 1859թ., ի հաշիվ Թուրքիայից կախյալ Մոլդովայի և Վալախիայի (Մունտենիա) միավորման:

Էթնիկական այս սիմբիոզն իր արտացոլումն է գտնում նաև ռումիներենի մոլդավական տարբերակի վրա. դրանում հավասար իրավունքներով գործածվում են բազմաթիվ բառեր ռուսերենից, ինչպես դա, հավանաբար, տեղի է ունեցել նաև Ռուսական կայսրության, այնուհետև՝ ԽՍՀՄ այլ ժողովուրդների լեզուների հետ:

Այս համատեքստում արժե հիշել մեր նշանավոր հայրենակից դոկտոր Լյուդվիկ Լազար Զամեգոֆին, որը 1887թ. համաեվրոպական բառապաշարի հիման վրա ստեղծեց միջազգային լեզուն՝ էսպերանտոն, բարեհունչ, դյուրին քերականությամբ, և որ գլխավորն է՝ քաղաքականապես չեզոք, այսինքն՝ անկանխակալ: Լեզու, որն աշխարհում գործեց գրեթե մեկուկես դար՝ ի հեճուկս արդի պատմության դաժան քամիների:

Մյուս կողմից՝ ներկայիս ռումինական հասարակությունը և իշխանությունները պետք է հասկանան, որ ՄՀ միավորվելը թանկ կնստի՝ ուղիղ և փո-

խաբերական իմաստներով: Ֆինանսական առումով ՄՀ-ն Եվրոպայի ամենաաղքատ երկրներից մեկն է, եթե ոչ ամենաաղքատը: Եվ Մոլդովան Ռումինիայի տնտեսական շրջանառության մեջ մտցնելը մեծ ծախսեր է նշանակում: Հիշենք թեկուզ Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության միավորումը Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության հետ:

Էթնոքաղաքական իմաստով Ռումինիան պետք է հասկանա, որ ՄՀ-ում շատ ռուսներ, ուկրաինացիներ և ռուսալեզու այլ ժողովուրդների ներկայացուցիչներ են ապրում: Ռումինիային միանալու դեպքում նրանք, բնականաբար, կպահանջեն պահպանել իրենց քաղաքացիական իրավունքները: Պատրա՞ստ է արդյոք սրան ռումինական հասարակությունը, որը հիմնականում, գոնե մտավորականության շրջանում, հակառուսական տրամադրություններ ունի: Այն դեպքում, երբ այս հնարավոր խնդիրը կգումարվի տեղի հունգարների հետ կապված վաղուց գոյություն ունեցող խնդրին, որոնք Բուդապեշտի թաքուն և անթաքույց աջակցությամբ կազմավորել են Սեկույի երկրամաս էթնիկ տարածքային ինքնավարությունը, որին չի ճանաչում ոչ պաշտոնական Բուխարեստը, ոչ էլ ռումինական հասարակությունն առհասարակ:

Ռումինիայում կա նաև մեծաթիվ, կոնֆլիկտածին գնչուական փոքրամասնություն:

Համապատասխանո՞ւմ է արդյոք ռումին ժողովրդի՝ ժամանակին կորցրած ծայրամասային շրջանների ռոմանտիկ վերամիավորման մասին ակնկալիքներին ևս մեկ՝ արդեն երրորդ էթնիկ փոքրամասնության (ռուսալեզու) ավելացումը: Այստեղ պետք է գործել «Յոթ չափիր, մեկ կտրիր» ռացիոնալ սկզբունքով: Եվ գուցե հենց այդ ժամանակ էլ պարզվի, որ ՄՀ ամբողջ տարածքն ինտեգրման ենթակա չէ, և հերիք է միայն Բեսարաբիան առանց Մերձդնեստրի ու Գագաուզիայի: Ինչպես նաև առանց Բուլղարական Մշակութային Ինքնավարության՝ Տարակլիա կենտրոնով. բուլղար քաղաքական գործիչ Կոստադին Կոստադինովն արդեն պահանջում է Ռումինիայից տարածքային փոխհատուցում, եթե Մոլդովան միանա Ռումինիային. նա կոչ է անում Բուլղարիային վերադարձնել այսօրվա բուլղարա-ռումինական սահմանի և Դունայ-Սև ծով ջրանցքի միջև ընկած հատվածը, որտեղ նախատեսվում է վերաբնակեցնել Տարակլիայի շրջանում հոծ բնակվող բուլղարներին: Բայց այս տարբերակի դեպքում կարող են անակնկալներ լինել՝ կապված Դնեստրի աջ՝ բեսարաբական ափի քաղաքների և շրջանների հետ, ինչպիսին են, օրինակ,

Բելցին, Բենդերները և այլն: Եվ անգամ իրականությանն այսքան մոտ սցենարը կարող է իրականացվել միայն այն ժամանակ, եթե մեծանան 21-րդ դարասկզբին ծնված երեխաները, որոնք ոչ մի դրական բան չգիտեն Ռուսական կայսրության կազմում Բեսարաբական նահանգի և ԽՍՀՄ կազմում Մոլդավական ԽՍՀ-ի անցյալի մասին:

Եվս մեկ դիտարկում՝ այս անգամ կապված Եվրամիության հետ: Մոլդավական տնտեսության աղետալի վիճակը նկատի ունենալով՝ ԵՄ կազմում ՄՀ-ին անմիջականորեն, այլ ոչ թե միայն որպես ասոցիատիվ անդամ ընդգրկելու սցենարը նույնպես մոտ ապագայի բան չի թվում: Հիմա Եվրախորհուրդն ինքն է բախվում հսկայական խնդիրների հետ, որոնցից գլխավորը ճգնաժամն է Մերձավոր և Միջին Արևելքից, Հյուսիսային Աֆրիկայից վիթխարածավալ իմիգրացիայի հետ կապված: ԵՄ-ը, ինչպես և նախկինում, Եվրոպայի վերջին պետություններին իր շարքերը կընդունի ավելի շուտ քաղաքական, այլ ոչ թե տնտեսական նկատառումներով: Բայց, սեփական թուլության պատճառով, դա կանի դանդաղ տեմպերով:

Տեղեկատվական անվտանգություն

ԻՆՏԵՐՆԵՏԻՑ ՄԻՋԻՆ ՕԳՏՎՈՂԻ ՊԱՏԿԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սամվել Մարտիրոսյան[*]

Հայաստանում ինտերնետի զարգացումը հանգեցնում է նաև ներգրավման համաշխարհային ցանցային շուկայում: Մյուս կողմից, հայաստանցի օգտատերերը բավական քիչ են օգտագործում համացանցի մի շարք գործառույթներ, օրինակ՝ էլեկտրոնային առևտուրը, էլեկտրոնային կառավարության առաջարկված ծառայությունները և այլն:

Հայաստանում ինտերնետից օգտվողների թիվը վերջին տարիներին դինամիկ աճում է, նրանց թիվը հասել է բնակչության գրեթե երկու երրորդին: Այսպես, 2012թ. համակարգիչ օգտագործում էր բնակչության 77%-ը, 2014-ին՝ 83%-ը: 2012թ. ինտերնետից օգտվում էր բնակչության 68%-ը, 2014-ին՝ 75%-ը: Սակայն ակտիվ օգտվողների թիվը (օրական 3 ժամ և ավելի) գրեթե նույնն է՝ 24-25% վերջին տարիներին[1]:

Աճում է սոցիալական ցանցերում ներկայությունը. Հայաստանի տարածքից օրական մեկ միլիոնից ավելի մարդ է այցելում Օդնոկլասնիկի (տե՛ս *Նկար 1*), Ֆեյսբուքի օրական լսարանը հասնում է մոտ 560 հազար օգտվողի, ամսական՝ 920 հազարի, Ինստագրամի օրական լսարանը մոտ 60 հազար է:

Աճ է նկատվում նաև դոմենային տիրույթում: Հայաստանի ազգային .am դոմենը ամենաարագ աճող եվրոպական դոմենների ցանկում երրորդն է, թիվը հասել է արդեն 30 հազարի (տե՛ս *Նկար 2*)[2]:

---

[*] «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական կենտրոնի փորձագետ:

[1] *Ameriabank*, «Հիմնավորվա՞ծ է արդյոք հեռահար բանկային ծառայությունների տարածումը Հայաստանում», http://www.ameriabank.am/userfiles/file/Presentation%20Internet%20banking.pdf

[2] CENTR. DomainWire Global TLD Report 2015/4
https://centr.org/DomainWire_Global_TLD_Report_2015_4

Նկար 1

Odnoklassniki.ru ամսական հայաստանյան լսարանը, ըստ Liveinternet-ի



Նկար 2

Ամենաարագ աճող եվրոպական ազգային դոմեններ, 2015թ. չորրորդ եռամսյակ, ըստ CENTR-ի



Սակայն հայաստանցի միջին ինտերնետից օգտվողը հիմնականում ունի այսպիսի յուրահատկություն. նա օգտվում է միանման ցանցային ծառայություններից: Եթե դիտարկենք Հայաստանից հիսուն ամենաայցելվող կայքերը, ապա մի կարևոր դիտարկում կարելի է անել[3].

[3] Top 50 sites in Armenia for all categories, http://www.similarweb.com/country/armenia

- Ըստ եղած վիճակագրության՝ հիմնականում հետաքրքրվում են սոցիալական ցանցերով, պոռնոգրաֆիայով, լրատվամիջոցներով և խաղադրույքներով:
- Կայքերի հիմնական մասը, բացի լրատվականներից, հայաստանյան չէ:

Փաստացի, համացանցն օգտագործվում է ավելի շատ որպես շփվելու և պասիվ նյութեր դիտելու տիրույթ: Որպես գործիք ցանցը գրեթե չի օգտագործվում: Հայաստանյան ցանցային խանութներից տարվա կտրվածքով երևանցիների ընդամենը 4%-ն է օգտվում (տե՛ս *Նկար 3*)[4].

Նկար 3

«Ասացեք, խնդրեմ, անձամբ Դուք վերջին 1 տարվա ընթացքում կատարե՞լ եք օնլայն գնումներ հայաստանյան օնլայն խանութներից/հարթակներից» հարցի պատասխանները, ըստ R-Insights կազմակերպության տվյալների



Հայաստանյան ցանցային խանութները բավական նոր են շուկայում: Սակայն օտարերկրյա ցանցային խանութներից օգտվողների թիվը նույնպես մեծ չէ՝ այն հասնում է 14,2%-ի (տե՛ս *Նկար 4*)[5].

[4] Երևանցիների միայն 4%-ն է առցանց գնումներ կատարում ՀՀ խանութներից. 17 դեկտեմբեր 2015, http://www.banks.am/am/news/retail/11590/

[5] Երևանցիների միայն 4%-ն է առցանց գնումներ կատարում ՀՀ խանութներից, 17 դեկտեմբեր 2015, http://www.banks.am/am/news/retail/11590/

Նկար 4

«Ասացեք, խնդրեմ, անձամբ Դուք վերջին 1 տարվա ընթացքում կատարե՞լ եք օնլայն գնումներ արտասահմանյան օնլայն խանութներից/հարթակներից» հարցի պատասխանները, ըստ R-Insights կազմակերպության տվյալների



Բանկերի ցանցային ծառայություններից օգտվում է երկու անգամ ավելի քիչ մարդ՝ բնակչության մոտ 2%-ը (տե՛ս *Նկար 5*)[6].

Նկար 5

Հեռահար բանկային ծառայությունների օգտագործումը Հայաստանում 2013-2014թթ., ըստ Ameriabank-ի տվյալների



[6] *Ameriabank*, «Հիմնավորվա՞ծ է արդյոք հեռահար բանկային ծառայությունների տարածումը Հայաստանում», http://www.ameriabank.am/userfiles/file/Presentation%20Internet%20banking.pdf

Պետության կողմից տրամադրվող էլեկտրոնային ծառայություններից բնակչությունը նույնպես չի շտապում օգտվել, չնայած դրանք շատ հարմար են: Օրինակ, էլեկտրոնային կառավարության գլխավոր կայքն ամսական ընդամենը 30-40 հազար այցելություն է ունենում[7], էլեկտրոնային վճարումների կայքը՝ ընդամենը 10 հազար[8] (տե՛ս *Նկար 6*).

Նկար 6

E-payments.am կայքի ամսական այցելությունների թիվը 2015թ. երկրորդ կիսամյակի տվյալներով՝ ըստ Similarweb-ի



Հայաստանում, փաստորեն, ինտերնետից օգտվողների թիվը դինամիկ աճում է, սակայն հայաստանցիները հիմնականում դժվարությամբ են օգտվում ինտերնետի մի շարք արդիական հնարավորություններից:

[7] http://www.similarweb.com/website/e-gov.am#overview
[8] http://www.similarweb.com/website/e-payments.am

Հայաստանը վարկանիշային աղյուսակում

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԻՆԴԵՔՍԸ 2015Թ.
(վարկանիշային վերլուծություն)

Կարեն Վերանյան*

«Համաշխարհային տնտեսական ֆորում» կազմակերպությունը վերջերս ներկայացրեց Մարդկային կապիտալի ինդեքսը 2015թ. վարկանիշային հերթական տարեկան հետազոտությունը, որտեղ աշխարհի տարբեր երկրներ վարկանշավորվում են իրենց մարդկային կապիտալի կամ պոտենցիալի չափորոշման սկզբունքի համաձայն: Վարկանիշային հետազոտության մեթոդաբանությունում շեշտադրումները կատարվում են 2 հիմնական ուղղությունների վրա.

1. կրթության հիմնական արդյունքները, որտեղ ուշադրությունը դարձվում է այն հանգամանքին, թե առանձնացված երկրներն ինչքանով են կարողանում ապահովել կրթության ոլորտում հասարակության բոլոր խավերի ու տարիքային խմբերի ներգրավվածությունը,
2. տնտեսական ակտիվության արդյունքները, որտեղ հիմնական շեշտադրումը կատարվում է մարդկային կապիտալի չափորոշման վրա՝ ըստ հասարակության տարիքային խմբերի:

Վարկանիշային հետազոտության մեթոդաբանությունը երկրների դասակարգման չափորոշման առումով հիմնվում է 0-100 միավոր սանդղակի վրա, որտեղ բարձրագույն միավորը վկայում է տվյալ երկրի մարդկային կապիտալի բարձր ցուցանիշների մասին:

Մարդկային կապիտալի գնահատման համար կազմակերպության ներկայացրած մեթոդաբանությունում կիրառված չափորոշիչները բավական ընդհանրական են և չեն ընդգրկում մարդկային կապիտալի ողջ պոտենցիալ կամ համալիր բովանդակությունը: Մյուս կողմից, կարելի է արձանագրել, որ մարդկային կապիտալի գնահատման հարցում կիրառվել են ավելի շուտ քա-

* «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ավագ փորձագետ:

նակական, քան թե որակական վարկանշավորման չափորոշիչներ: Ինչպես, օրինակ, կրթության կամ աշխատանքի ոլորտում հաշվարկվում և ներկայացվում են ոլորտում ներգրավված հասարակության տարբեր տարիքային խմբերի մասին վիճակագրական տվյալները՝ ըստ ներգրավվածության ակտիվության մակարդակների: Սակայն այստեղից, ըստ էության, հստակ և փաստարկված հետևություններ հնարավոր չէ կատարել տվյալ երկրի հասարակության գիտական, գիտատեխնոլոգիական կամ կրթական պոտենցիալի և, առավելևս, ընդհանուր որակական արդյունքների վերաբերյալ:

Երկրի մարդկային կապիտալի հաշվարկման մեջ գիտատեխնոլոգիական արդյունքները կամ արտադրանքն ինքնին հանդիսանում են մարդկային կապիտալի կարևոր բաղադրիչներից մեկը, սակայն, միևնույն ժամանակ, ուղղակիորեն փոխկապակցված են մարդկային կապիտալի բաղադրիչ հանդիսացող այնպիսի էական գործոնների հետ, ինչպիսիք են տվյալ հասարակության կամ երկրի մարդկային կապիտալի ֆիզիկական հաշվարկը, առողջապահական ասպեկտը, բարեկեցությունը և այլն:

Փորձենք ներկայացնել զեկույցի հիմնական առանձնահատկությունները՝ ըստ մեր կողմից առանձնացված պետությունների վարկանշավորման:

Հետազոտությունում ներառված է 124 երկիր: Մարդկային կապիտալի ինդեքսը 2015թ. վարկանիշային հետազոտությունում լավագույն արդյունքը Ֆինլանդիայինն է՝ 85,78 ամփոփ միավոր: Ֆինլանդիային հաջորդում են Նորվեգիան, Շվեյցարիան, Կանադան և Ճապոնիան:

Այժմ փորձենք առանձնացնել ԱՊՀ, Հարավային Կովկասի և հարակից երկրների մարդկային կապիտալի վարկանշավորման արդյունքները: Նշենք, որ կազմակերպության զեկույցում ներառվել են տարածաշրջանի ոչ բոլոր երկրները, ինչը, թերևս, պետք է պայմանավորել կազմակերպության՝ այդ երկրների մասով անհրաժեշտ տեղեկատվության բացակայության հանգամանքով:

Հաշվի առնելով վարկանիշային զեկույցում ընդգրկված երկրների ընդհանուր քանակը՝ պետք է ասել, որ ԱՊՀ երկրների շարքում լավագույն արդյունքներ արձանագրած 5 երկրները բավական բարձր դիրքեր են զբաղեցրել: Ինչպես նկատելի է աղյուսակից, ԱՊՀ երկրների շարքը գլխավորում է Ռուսաստանը, որը զբաղեցնում է զեկույցում ներառված երկրների ցուցակի 26-րդ հորիզոնականը: Ռուսաստանին անմիջապես հաջորդում են Ուկրաինան և Ղազախստանը, որոնք համապատասխանաբար գտնվում են 31 և 37-րդ դիրքերում:

Աղյուսակ 1

Մարդկային կապիտալի ինդեքսը 2015թ., ԱՊՀ և այլ երկրներ

Դիրքը (ընդհանուր ցուցակում)	Երկիրը	Ամփոփ միավորը
ԱՊՀ երկրներ		
1 (26)	Ռուսաստան	77,54
2 (31)	Ուկրաինա	76,21
3 (37)	Ղազախստան	74,56
4 (43)	Հայաստան	72,50
5 (44)	Ղրղզստան	71,82
6 (63)	Ադրբեջան	67,58
7 (65)	Տաջիկստան	67,24
8 (71)	Մոլդովա	66,81
Այլ երկրներ		
10 (68)	Թուրքիա	67,09
11 (80)	Իրան	63,20

Աղբյուրը՝ http://www.weforum.org/reports, Համաշխարհային տնտեսական ֆորում

ԱՊՀ երկրների ցուցակում 4-րդ լավագույն արդյունքը Հայաստանինն է՝ 43-րդ դիրք: Հայաստանին դիրքային զգալի տարբերությամբ զիջում է հարևան Ադրբեջանը, որը գտնվում է 63-րդ հորիզոնականում: Հիշեցնենք, որ Հարավային Կովկասի երկրներից զեկույցում չի ներառվել միայն Վրաստանը:

Ինչպես տեսնում ենք պատկերված աղյուսակից, Հայաստանն իր վարկանիշային ցուցանիշով անհամեմատ գերազանցում է նաև մյուս հարևան երկրներին՝ Թուրքիային և Իրանին, որոնք համապատասխանաբար գտնվում են 68 և 80-րդ հորիզոնականներում:

Գրաֆիկ 1

Մարդկային կապիտալի ինդեքսը 2015թ., ԱՊՀ երկրներն՝ ըստ ամփոփ միավորների



Գրաֆիկը կազմվել է կազմակերպության տրամադրած տեղեկատվության հիման վրա

Հուշագիր հեղինակին

«Գլոբուս» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ՝ նվիրված Հայաստանի և Հայության ռազմաքաղաքական, տեղեկատվական և վերջինիս մեջ ընդգրկված քաղաքակրթական ու հոգևոր անվտանգության խնդիրներին, հայկական համայնքների և տարալեզու-տարադավան հայերի կազմակերպչական անվտանգության հիմնահարցերին:

«Գլոբուս» ամսագրի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «Գլոբուս» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen»* տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 7 էջը:
2. Առաջին անգամ հոդված ներկայացնելիս պարտադիր կցել հեղինակի ինքնակենսագրությունը *(CV)*:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև հեռավորությունը՝ 1.5:
4. Ինտերնետային աղբյուրների հղումները նշել տողատակում:

Խմբագրություն

«ԳԼՈԲՈՒՍ» ամսագիր
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 18.03.2016թ.
Թիվ 1 (70), 2016թ.
Տպաքանակը՝ 150։

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 4 մամուլ։ Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «ԹԱՍԿ» ՍՊԸ տպարանում